



ADVANCED  
SOCIAL  
TECHNOLOGIES

# Քաղաքականության Մոդելավորման Վերլուծություն *Ջրամատակարարում*

*ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ԾՐԱԳԻՐ*

ԱՌԱՋԱԴԵՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ  
*ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ*

Հայաստան

2012թ.

# ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## Բովանդակություն

Ամփոփում .....	4
Գրականության Ուսումնասիրություն .....	6
Քաղաքականության Խնդիրը և Հարցը .....	10
Քաղաքականության Այլընտրանքների Քննարկում և Լուծումների Մոդելավորում .....	16
Խորհուրդ Տրվող Տարբերակ .....	27
Քաղաքականության Իրականացում .....	29
Ազդեցության Գնահատում .....	35
Հավելված 1. Վիճակագրական և ֆինանսական տվյալներ .....	39
Հավելված 2. Տարբերակներ 1-3-ի համեմատություն .....	40
Հավելված 3. ՀՀ Ֆինանսների նախարարությանը ներկայացվող՝ նոր նախաձեռնությունների ՄԺԾԾ ձևի նախագիծ.....	41
Հավելված 4. Շահագրգիռ կողմերի սխեմա՝ առաջարկվող քաղաքականության տարբերակի համար .....	43
Հավելված 5. Արդյունավետության չափման միջոցը և ազդեցությունը օգուտների բաշխման վրա .....	44
Հղումներ.....	46

## Աղյուսակներ

Աղյուսակ 1. Ջրային ոլորտի հիմնական ցուցանիշները 2005-2009թթ. ....	11
Աղյուսակ 2. Ջրամատակարարման դիմաց ստացվող հաշիվների ֆինանսական բեռը SS բյուջեի վրա .....	11
Աղյուսակ 3. Ջրի միացումների բաշխումն ըստ քվինտիլների .....	12
Աղյուսակ 4. Մեկ շնչի հաշվով ջրի սպառումն ըստ քվինտիլների.....	12
Աղյուսակ 5. Ավելի որակով ծառայությունների դիմաց ավել վճարելու հակվածությունն ըստ քվինտիլների .....	13
Աղյուսակ 6: Հաշվարկների արդյունքներ (տարբերակների մոդելավորում) .....	23
Աղյուսակ 7: ՋնՋ միջին ամսական հաշիվները Ստատուս քվոյի և այլ քննարկված տարբերակների դեպքում .....	24
Աղյուսակ 8. Տնային տնտեսությունների ներկա և հնարավոր ծախսերը (մասնաբաժինը SS բյուջեներում).....	24
Աղյուսակ 9: Ջրի պահանջարկի հաշվարկ՝ ընդգրկելով էլաստիկության գործոնը.....	26
Աղյուսակ 10.Առաջարկվող գործողությունների ժամանակացույց.....	34
Աղյուսակ 11: Ջրի ոլորտի քաղաքականության այլընտրանքների ԾԱՎ գործակիցները .....	35

Աղյուսակ 12: Առաջարկվող քաղաքականության ազդեցության հաշվարկն ըստ Քվինտիլների .....	37
Աղյուսակ 13. Հիմքում ընկած տվյալները և մոդելային տարվա կառուցումը .....	39
Աղյուսակ 14: Քաղաքականության տարբերակի արժեքի հաշվարկ .....	39
Աղյուսակ 15. Քաղաքականության տարբերակների վերաբերյալ համեմատական աղյուսակ՝ Պետական բյուջեի տեսանկյունից.....	40
Աղյուսակ 16. Քաղաքականության տարբերակների վերաբերյալ համեմատական աղյուսակ՝ ընտանեկան բյուջեի տեսանկյունից .....	40
Աղյուսակ 17. Ազդեցությունն աղքատ SS-ների վրա .....	40
Աղյուսակ 18. Արդյունավետության չափման միջոց. Ակնկալվող օգուտների բաշխումն ըստ քվինտիլների՝ առաջարկվող քաղաքականության իրականացման դեպքում .....	44

## Ամփոփում

Ջրամատակարարման հասանելիությունը և դրա մատչելիությունը միանշանակորեն Հայաստանում ներկայիս քաղաքականության քննարկման առանցքային կետերից են: Քանի որ այն ՀՀ Կառավարությունից պահանջում է, և շարունակելու է պահանջել ֆինանսական զգալի ներարկումներ դեպի ջրային ոլորտ, ապա կարևորագույն նշանակություն են ստանում այնպիսի ուղիների քննարկումները՝ ներառյալ բյուջետային խնդիրները, որոնք կբարելավեն կարիքավորներին օգնելու նպատակով կատարվող թիրախավորումը: **ԱՍՏ-ի հարցման արդյունքները ցույց են տալիս, որ տնային տնտեսությունների ամենաաղքատ 20%-ը օգտվում է սուբսիդիաների միայն 11%-ից (մեկ շնչի հաշվով սպառման հիման վրա)<sup>1</sup>, մինչդեռ ամենահարուստները ստանում են դրանց 37%-ը՝ մեկ շնչի հաշվով ջրի ավելի մեծ սպառման շնորհիվ:** Չնայած, որ քաղաքականության նման երկրնորանքի լուծումը վերլուծական փուլում ակնհայտ է թվում, այն է. դադարեցնել ուղղակի սուբսիդավորումը և անցնել աղքատներին վճարումների կատարմանը՝ ջրի սպառման աճը խրախուսելու նպատակով, սակայն դրա իրականացումն այլ հարթությունում է: Չնայած ՀՀ օրենսդրությունում հայտարարված լինելուն՝ այն հաճախ հետաձգվում է ելնելով էկզոգեն գործոններից և պատճառներից:

ՀՀ Ջրային Օրենսգրքում<sup>2</sup> սահմանված քաղաքականությունը նախատեսում է աստիճանական անցում դեպի սակագների՝ ծախսերի փոխհատուցման մակարդակ՝ բնակչության եկամուտների ավելացմանը և ջրամատակարարման և կոյուղու ընկերությունների (ՋԿ) գործունեության բարելավմանը զուգահեռ: Մակագների կտրուկ բարձրացման անհրաժեշտությունից խուսափելու նպատակով՝ մինչ այժմ կառավարությունը սուբսիդավորել է ՋԿ ընկերություններին՝ և՛ գործառնական և՛ կապիտալ ծախսերի մասով: Տրամաբանորեն, ցանկացած սուբսիդավորման կամ սակագները ցածր, մատչելի մակարդակում պահելու քաղաքականության թիրախ է հանդիսանում բնակչության աղքատ շերտը: Այլ խոսքերով, կառավարությունն արձագանքում է ջրին մատչում ունենալու հետ կապված սոցիալական, առողջական և այլ մտահոգություններին: Ներկայիս քաղաքականությունը՝ ծառայությանը մատչման և ծածկույթի տեսանկյունից, ներառում է բոլոր 5 քվինտիլներն՝ անկախ եկամտի մակարդակից, սակայն, ծառայությունների փաստացի սպառման տեսանկյունից, ամենահարուստ տնային տնտեսություններին մոտ 4 անգամ ավելի մեծ առավելություն է տրվում, քան՝ ամենաաղքատին: Մինչդեռ, տրամաբանորեն, մատչելիությունը մտահոգության առարկա է աղքատների, այսինքն՝ Քվինտիլ 1-ի և, մի փոքր նվազ աստիճանով 2-րդ քվինտիլի համար:

Նշված ոլորտին կառավարության միջամտությունները մինչ այժմ կատարվել են հետևյալ եղանակներով. (i) սուբսիդիաներ կառավարության սեփականություն (մասնակի կամ ամբողջությամբ) հանդիսացող ջրային ընկերություններին՝ գործառնական ճեղքվածքները փակելու նպատակով, (ii) ուղղակի ներդրումներ նշված ընկերություններում՝

<sup>1</sup> Մանրամասների համար տե՛ս

Քաղաքականության Խնդիրը և Հարցը բաժինը

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության Ջրային Օրենսգիրք, ընդունվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2002թ.

ջրամատակարարման և կոյուղու ենթակառուցվածքները վերանորոգելու և բարելավելու նպատակով, ինչպես նաև նույն նպատակով արտոնյալ վարկային միջոցների տրամադրում:

Շատ հաճախ համարվում է, որ ջուրը տարբերվում է այլ ապրանքներից՝ դիտարկելով ջրային ծառայությունը որպես հիմնարար իրավունք, որը պետք է ապահովվի՝ անկախ դրա դիմաց վճարելու կարողությունից կամ անկարողությունից: Սա հանգեցրել է այն խորհուրդին, համաձայն որի՝ առնվազն աղքատների համար ջրի սակագները պետք է պահվեն ցածր մակարդակի վրա: Մակայն դա նշանակում է, որ տարբերությունը ստիպված կլինի վճարել մեկ ուրիշը: Փորձից ելնելով, այդ «մեկ ուրիշը» հարկատուներն են կամ այլ հաճախորդները, կամ էլ՝ միջազգային հանրությունը (որոշ դեպքերում):

Համեմատության համար, ինչպես նշված է ՀԲ-ի «Հայաստանի Հանրապետություն. Նոթեր Ջրամատակարարման ոլորտի մասին»<sup>3</sup> փաստաթղթում՝ «մեկ ԽՄ-ի դիմաց մոտ 200 ՀՀ դրամ սակագնի մակարդակը ցածր է՝ համեմատած տարածաշրջանային կամ միջազգային նորմերին (որտեղ տիպիկ նորմերը կազմում են մոտ 400 ՀՀ դրամ մեկ ԽՄ-ի դիմաց)»: Օրինակ, Վրաստանի Թբիլիսի քաղաքում սակագինը երեք անգամից ավելի թանկ է քան Երևանում, իսկ Մոսկվայում և Բուդապեշտում այն մոտ 2.5 անգամ բարձր է:

Մեր վերջին հարցումը<sup>4</sup> ցույց տվեց, որ տնային տնտեսությունները պատրաստակամ են լրացուցիչ վճարել ամսեկան միջինում մոտ 179 ՀՀ դրամ (0.5 ԱՄՆ դոլար կամ ներկայիս միջին հաշվի 9.2%-ը)՝ ջրամատակարարման բարելավված ծառայությունների դիմաց: Հատկանշական է, որ ամենաաղքատ քվինտիլի ՏՏ-ները պատրաստ են լրացուցիչ վճարել շատ ավելի մեծ գումար (295 ՀՀ դրամ կամ իրենց ներկայիս հաշվի մոտ 22%-ը), մինչդեռ ամենահարուստները՝ ընդամենը 144 ՀՀ դրամ (ավելացում 5.3%-ով): Եթե էքստրապոլացնենք այն ամսական միջին գումարը, որը տնային տնտեսությունները պատրաստակամ են վճարել բարելավված ծառայությունների համար, իսկ այնուհետև հաշվի առնենք 5 ՋԿ ընկերությունների կողմից սպասարկվող միացումների/տնային տնտեսությունների թիվը (720,000), ապա արդյունքում կարելի է ստանալ 1.5 մլրդ. ՀՀ դրամ լրացուցիչ տարեկան ֆինանսական ներհոսքեր դեպի ՋԿ ընկերություններ (720,000 տնային տնտեսություններ \* 179 ՀՀ դրամ \* 12 ամիս = 1,544 մլն. ՀՀ դրամ):

Վերը նշվածը ցույց է տալիս, որ կառավարությունը կարող է այս հարցում առաջ գնալ ընդհուպ մինչև ԾԱՎ հաշվետվությունում քննարկված Տարբերակ 2-ը (Գործառնական ծախսերի փոխհատուցման տարբերակ), այսինքն՝ կարող է բարձրացնել սակագները մինչև այն մակարդակը, որն ապահովում է գործառնական ծախսերի փոխհատուցում՝ միաժամանակ սակագների ավելացած մասի դիմաց փոխհատուցում տրամադրելով աղքատ տնային տնտեսություններին (կապիտալ ծախսերը կշարունակվեն ֆինանսավորվել կառավարության կողմից՝ որպես ջրամատակարար ընկերությունների սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ ներդրումներ):

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետություն. Նոթեր Ջրամատակարարման Ոլորտի Մասին, Համաշխարհային Բանկ, Հաշվետվություն No. 61317-AM, Մայիս 2011թ.

<sup>4</sup> Իրականացվել է ԱՄՏ-ի կողմից 2011թ. հունիս-հուլիս ամիսներին

## Գրականության Ուսումնասիրություն

Ինչպես արդեն նշվեց, ջրամատակարարման հասանելիությունը և դրա մատչելիությունը Հայաստանում ներկայիս քաղաքականության քննարկման գերակայություններից են: Մաշված ենթակառուցվածքների պատճառով առկա մեծ կորուստները, ինչպես նաև Խորհրդային ժամանակաշրջանից ժառանգված՝ բարձր աստիճանի կախվածությունը պոմպերից, ազդում են բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի վրա: Այդ իսկ պատճառով, մինչ այժմ ոլորտում պահանջվել են և ակնհայտորեն կշարունակեն պահանջվել հսկայական կապիտալ ներդրումներ: Այսպիսով, կարևորագույն նշանակություն են ստանում այնպիսի ուղիների քննարկումները՝ ներառյալ բյուջետային խնդիրները, որոնք կբարելավեն կարիքավորներին օգնելու նպատակով կատարվող թիրախավորումը: Չնայած այն փաստին, որ Հայաստանի գործող օրենսդրությունը որպես նպատակ է սահմանում ջրամատակարարման սակագների՝ ծախսերի փոխհատուցման մակարդակին հասցնելու ապահովումը (առանց վերջնաժամկետ սահմանելու), 5 հիմնական ջրամատակարար ընկերությունների սակագներում ծախսերի փոխհատուցումը դեռևս հեռու է իրականացումից:

Սուբսիդիաների և սոցիալական քաղաքականությունների հարցի հետ կապված, Ստրաուբը<sup>5</sup> պնդում է, որ պարզ չէ, թե արդյո՞ք դրանք պետք է լինեն ենթակառուցվածքներին առնչվող և արդյո՞ք ջրային ոլորտի կարգավորողները պետք է ներառված լինեն բարեկեցության ծրագրի մշակման կամ կառավարման գործում: **Կոմունալ սակագների միջոցով սպառման ուղղակի սուբսիդիաների արդյունավետության մասին վկայությունները միտված են ցույց տալու, որ ավելի լավ կլինեն դրանք ինտեգրել կառավարության՝ ընդհանուր բարեկեցության և աղքատության կրճատման քաղաքականությունների մեջ:**

Մինչդեռ Ուիթինգթոնը և այլք<sup>6</sup> նշում են, որ մարդկանց մեծամասնությունը “տեղյակ չեն համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի ծառայությունների իրական տնտեսական արժեքների մասշտաբից”: Ըստ նրանց, դրա համար կա մի քանի պատճառ: Օրինակ, կապիտալ ծախսերը մեծապես սուբսիդավորվում են կառավարության բարձր օղակների կողմից (և միջազգային դոնորների կողմից՝ զարգացող երկրներում), այնպես որ ծառայություն ստացող տնային տնտեսությունները չեն տեսնում իրական կապիտալ ծախսերի արտացոլումն իրենց կողմից վճարվող՝ ծավալների վրա հիմնված գների մեջ: Սա տեղին է նաև Հայաստանի դեպքում: Նմանապես, հեղինակների կողմից նշվող մեկ այլ գործոն (ջրային ռեսուրսի դիմաց ոչ համարժեք վճարները, կոմունալ ընկերությունների ունեցած մեծ դեֆիցիտը և այլն) նույնպես ճշմարիտ է Հայաստանի դեպքում: Նրանց կողմից նշված վերջին գործոնն այն է, որ “ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների սպառողներին տրամադրած սուբսիդիաները ոչ միայն հսկայական են, այլ նաև՝ ռեգրեսիվ: Հաճախ, քաղաքական տեսանկյունից ցանկալի չէ թույլ տալ, որպեսզի մարդիկ հասկանան, որ հիմնականում ավելի շատ ջուր սպառող՝ միջին և բարձր եկամուտ ունեցող տնային տնտեսությունները, դրանով իսկ, փաստացի ամենաշատ օգուտն են ստանում սուբսիդավորումից:”

<sup>5</sup> Ստրաուբ, Ս. 2009թ. - Կառավարումը Ջրամատակարարման Ոլորտում: Թեմատիկ աշխատություն Գլոբալ Ջարգացման Ցանցի “Կառավարման Տեսակները. Արդյունավետ Հանրային Ծառայությունների Մատուցում” ծրագրի համար

<sup>6</sup> Ուիթինգթոն, Դ. և Հանեմ, Վ. Մայքլ, 2009թ. – Առավել թույլ զարգացած երկրներում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավման մարտահրավերը

Ինչպես նշում են Ուիթինգթոնը և այլոք<sup>7</sup>՝ «Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի բարեփոխումներ տեղի են ունենում շատ երկրներում: Հատկապես մտահոգիչ է աղքատների վիճակը: Բարեփոխումները պետք է նախագծվեն այնպես, որ աղքատները մատչում ստանան մատչելի ծառայություններին: Առանցքային խնդիրը ջրի գնի սահմանումն է: Սակայն, փորձը ցույց է տալիս, որ գների սահմանումը և սուբսիդիաները, որոնք հաճախ տրամադրվում են ջրի սակագների միջոցով, կարող են ոլորտում լուրջ անարդյունավետության աղբյուր հանդիսանալ:» Ավելին, ըստ հեղինակների՝ սակագների սահմանումն ունի չորս հիմնական նպատակներ. ծախսերի փոխհատուցում, տնտեսական արդյունավետություն, հավասարություն և մատչելիություն: Աշխատությունում քննարկվում է սակագների տարբեր կառուցվածքների կիրառման փորձը՝ ուղղված մատչելիության խնդիրը լուծելուն, որտեղ, փաստորեն, ջրի սակագներն օգտագործվում են հաճախորդների միջև եկամուտների վերաբաշխման համար՝ հատկապես այնպիսի հանգամանքներում, երբ բացակայում են լավ մշակված և արդյունավետ բարեկեցության ծրագրերը: Սակայն, խնդիրը կայանում է նրանում, որ սա ստեղծում է արդյունավետության հետ լուրջ հակասություններ՝ քանի որ ստեղծվում են ավելի ցածր սակագնով ծառայություն ստացողների խրախուսման անցանկալի արդյունքներ: Վերջիվերջո, սուբսիդիան կարող է հասնել կամ չհասնել աղքատներին՝ կախված նրանց սպառման ծավալներից, համակարգին միացված լինելու փաստից, ինչպես նաև ինքնին սակագնի նախագծման կառուցվածքից:


Շատ հաճախ համարվում է, որ ջուրը տարբերվում է այլ ապրանքներից՝ դիտարկելով ջրային ծառայությունը որպես հիմնարար իրավունք, որը պետք է ապահովել մարդկանց՝ անկախ դրա դիմաց վճարելու կարողությունից կամ անկարողությունից: Սա հանգեցրել է այն խորհուրդին, համաձայն որի՝ առնվազն աղքատների համար ջրի սակագները պետք է պահվեն ցածր մակարդակի վրա: Սակայն դա նշանակում է, որ տարբերությունը ստիպված կլինի վճարել մեկ ուրիշը: Փորձից ելնելով, այդ «մեկ ուրիշը» հարկատուներն են կամ այլ հաճախորդները, կամ էլ՝ միջազգային հանրությունը (որոշ դեպքերում):

Այնուհետև, աշխատությունում տրված է ծառայությունների ուղղակի սուբսիդավորման սխեմատիկ պատկեր, որը ներկայացված է ստորև.


---

<sup>7</sup> Դ. Ուիթինգթոն, Ջ. Բոլանդ, Վ. Ֆոսթեր - Ջրի սակագները և սուբսիդիաները Հարավային Ասիայում. Հիմունքների ընկալում:

ա) Առաջարկի կողմ



բ) Պահանջարկի կողմ



Դ. Ուիթինգթոնը “Համայնքային ջրամատակարարման գնի սահմանում և սակագնի մշակում. Բարեփոխումների օրակարգ Հարավային Ասիայի համար” աշխատությունում (2003թ.) նշում է, որ “ջրի սակագները հաճախ չեն ծառայում իրենց գլխավոր նպատակին. դրանք չեն ստեղծում բավարար ծավալի եկամուտներ՝ ֆինանսական ծախսերը փոխհատուցելու համար, տնային տնտեսություններին չեն ուղարկում ճիշտ տնտեսական ազդանշաններ և չեն օգնում աղքատների մեծամասնությանը:” Փաստաթուղթը նկարագրում է Հարավային Ասիայի բազմաթիվ քաղաքներում գների սահմանման և սակագների բարեփոխումների գլխավոր էլեմենտները: Այն խորհուրդ է տալիս հետևյալ՝ դեպի աղքատներն ուղղված քաղաքականությունները. ապահովել, որ ցանկության դեպքում աղքատ տնային տնտեսություններն ունենան միացում, կանխավ սուբսիդավորել միացման ծախսերը, բայց ոչ՝ ջրի ծավալային օգտագործումը, ապահովել հանրային ծորակներ և այլն:



Նուժեն և Ուիթինգթոնը “Զարգացող երկրներում ջրի պահանջարկի գնահատում. Ընդհանուր պատկեր”<sup>8</sup> աշխատությունում եզրակացրել են, որ զարգացող երկրներում տնային տնտեսությունների ջրապահանջի ֆունկցիաները ցույց են տալիս, որ մասնավոր միացումների ջրի սեփական գնային էլաստիկությունը գտնվում է -0.3 մինչև -0.6 սահմաններում, իսկ եկամուտների էլաստիկությունը՝ սովորաբար 0.1–0.3 սահմաններում, ինչը երկու դեպքում էլ մոտ է արդյունաբերական զարգացած երկրների համար սովորաբար ներկայացվող ցուցանիշներին: Սա հանդիսանում է ջրապահանջի կառավարման ծրագրի կարևոր բաղադրիչ:

Գրականության ուսումնասիրությունն առաջարկում է մատչելիության խնդիրը լուծելու տարբերակներից մեկը՝ առանց արդյունավետության, եկամուտների ստեղծման և հավասարության նպատակներին վնասելու: Այդ տարբերակն է հանդիսանում միայն աղքատ տնային տնտեսությունների սուբսիդավորումը, որոնք ջրամատակարար ընկերությանը կվճարեն ամբողջական սակագինը՝ այլ բաժանորդների հետ միասին:

ՀՀ Ջրային Օրենսգրքում սահմանված քաղաքականությունը նախատեսում է աստիճանական անցում դեպի ծախսաձեռնարկ սակագներ՝ բնակչության եկամուտների ավելացմանը և ջրամատակարարման և կոյուղու ընկերությունների (ՋԿ) գործունեության արդյունքների բարելավմանը զուգահեռ: Սակագների կտրուկ բարձրացման անհրաժեշտությունից խուսափելու նպատակով՝ մինչ այժմ կառավարությունը սուբսիդավորել է ՋԿ ընկերություններին՝ և՛ գործառնական և՛ կապիտալ ծախսերի մասով: Տրամաբանորեն, ցանկացած սուբսիդավորման կամ սակագները ցածր, մատչելի մակարդակում պահելու քաղաքականության թիրախ է հանդիսանում բնակչության աղքատ շերտը: Այլ խոսքերով, կառավարությունն արձագանքում է ջրին մատչում ունենալու հետ կապված սոցիալական, առողջական և այլ մտահոգություններին: Ներկայիս քաղաքականությունը ներառում է բոլոր 5 քվինտիլները՝ համարյա հավասարապես, սակայն, տրամաբանորեն, մատչելիությունը մեծ խնդիր է աղքատների, այսինքն՝ Քվինտիլ 1-ի և Քվինտիլ 2-ի, համար:

---

<sup>8</sup> Ս. Նուժեն, Դ. Ուիթինգթոն - “ Զարգացող երկրներում ջրի պահանջարկի գնահատում. Ընդհանուր պատկեր”, The World Bank Research Observer, Հատոր 25, no. 2, Օգոստոս 2010թ.

## Քաղաքականության Խնդիրը և Հարցը

Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի խնդիրները բազմաթիվ են. բացի ծառայությունների ներկա արժեքի ամբողջական փոխհատուցում չապահովող սակագներից՝ պահանջվող ներդրումների չափն ահռելի է: Սակայն, իրատեսական չէ մոտակա 10-20 տարիների համար գնահատել ներդրումների փաստացի ընդհանուր ծավալը, որոնք անհրաժեշտ կլինեն կառավարության տարբեր փաստաթղթերում սահմանված ցանկալի արդյունքներին հասնելու համար: Սակայն, վերջիվերջո, նշված ներդրումներն անհրաժեշտ կլինի «վերադարձնել» սակագների միջոցով, քանի որ մինչ այժմ կատարված մեծածավալ ներդրումները ֆինանսավորվել են դոնորային արտոնյալ միջոցներով:

Այս ոլորտին կառավարության միջամտությունները մինչ այժմ կատարվել են հետևյալ եղանակներով. (i) սուբսիդիաներ կառավարության սեփականություն (մասնակի կամ ամբողջությամբ) հանդիսացող ջրային ընկերություններին՝ գործառնական ճեղքվածքները փակելու նպատակով, (ii) ուղղակի ներդրումներ նշված ընկերություններում՝ ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքները վերանորոգելու և բարելավելու նպատակով, ինչպես նաև նույն նպատակով արտոնյալ վարկային միջոցների տրամադրում: Ուշադրության է արժանի այն փաստը, որ ներկայումս ջրամատակարար բոլոր 5 ընկերությունները կառավարվում են մասնավոր օպերատորների կողմից կամ նրանց են տրված վարձակալությամբ՝ մասնավոր հատվածի մասնակցության միջոցառումների շրջանակներում: Միջամտության վերջին ձևը ֆինանսավորվել է ՄՖՀ-ների վարկերով, որոնք ի սկզբանե կապված են ենթակառուցվածքների վերանորոգման/արդիականացման ծրագրին:

Այսպիսով, միջամտությունների երկու հիմնական ուղղությունները կարելի է ամփոփել որպես սուբսիդիաներ՝ գործառնական ճեղքվածքների համար (որոնք ներառում են ցածր սակագների և թերի հավաքագրման<sup>9</sup> ազդեցությունները) և կապիտալ ծախսերի ֆինանսավորում:

Ինչևէ, **2002թ. ընդունված ՀՀ Ջրային Օրենսգրքում սահմանված քաղաքականությունը ենթադրում է աստիճանական անցում դեպի ծախսաձեռնարկ սակագներ**՝ բնակչության եկամուտների ավելացմանը և ջրամատակարարման և կոյուղու ընկերությունների (ՋԿ) գործունեության արդյունքների բարելավմանը զուգահեռ: Այս մասով, վերջին 10 տարիների ընթացքում սակագներն աստիճանաբար բարձրացվել են՝ մատակարարված մեկ խորանարդ մետր ջրի դիմաց 46 ՀՀ դրամից հասնելով ներկայիս մոտ 185 ՀՀ դրամ մակարդակին: Սակագնի բարձրացմանը զուգահեռ աճել են նաև բաժանորդների վճարումներից ստացվող եկամուտները, մինչդեռ սուբսիդիաների ծավալը նվազել է մինչև 2009թ.<sup>10</sup>: Սակայն, ընկերությունների միջոցով ջրի սակագների սուբսիդավորումը

Հայաստանում դեռևս կիրառվող պրակտիկա է:

<sup>9</sup> Վերջին տարիներին սա դարձել է փոքր խնդիր. օրինակ՝ 2010թ. բոլոր հինգ ընկերությունների համար հավաքագրման արդյունավետությունը հասել է 97%-ի, այդ թվում 95%-ը՝ բնակիչ-բաժանորդներից:

<sup>10</sup> Արժե նշել, որ 2006թ. Երևանի սուբսիդավորումը դադարեցվեց մինչև 2010թ.: Սկսած 2010թ. հունիսից, Կարգավորողն անփոփոխ թողեց Երևան Ջուր ընկերության սակագները; Այդ իսկ պատճառով, Երևանի քաղաքապետարանը մտադիր է մասնավոր օպերատորին (վարձակալին) ուղղակիորեն փոխհատուցել տարբերությունը: Այդպիսով, սուբսիդիաների ընդհանուր ծավալը կաճի 2010թ. և, ենթադրաբար, 2011թ.:

Աղյուսակ 1. Ջրային ոլորտի հիմնական ցուցանիշները 2005-2009թթ.

	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.
Մատակարարված ջուր, մլն. ԽՄ	114.9	96.3	91.7	98.6	92.0	84.9
Ընդհանուր հասույթ, մլն. դրամ	12,691.1	12,792.5	13,571.1	14,179.8	14,723.1	15,747.9
Վճարումներ բաժանորդներից, մլն. դրամ	8,993.8	10,295	11,719.4	12,588.1	13,834.6	15,245.5
Վճարների հավաքագրման մակարդակ, %	71%	80%	86%	89%	94%	97%
ՋԿԸ-ների տրվող ընթացիկ սուբսիդիաներ, մլն. դրամ	2,568.8	1,633.6	1,381.3	1,287.0	901.8	1500.9 <sup>11</sup>
Ընդամենը ընթացիկ ծախսեր, մլն. դրամ	11,562.6	11,928.6	13,100.7	13,875.1	14,736.4	16,746.5

Ինչպես նշված է ՕԲՎ հաշվետվությունում, համաձայն 2009թ. անցկացված հարցման արդյունքների՝ տնային տնտեսություններում խմելու ջրի միջին սպառումը 2008թ. կազմել էր ամսական 1695 ՀՀ դրամ (5.5 ԱՄՆ դոլար) կամ SS ընդհանուր ծախսերի 1.08%, իսկ խմելու ջրի ոլորտում կառավարության ծրագրերից օգտվել է բնակչության 91.4%-ը: 2011թ. անցկացված հարցումը բացահայտեց, որ 2008թ. համեմատ ամսական վճարումները միջինում աճել են 250 դրամով (մոտ 15%)՝ 2010թ. համար ըստ քվինտիլների SS վճարումների ստորև բերված բաշխումով: Արժե նշել, որ միջին վճարման մասնաբաժինը SS ընդհանուր ծախսերում նվազել է մինչև 0.9%:

Աղյուսակ 2. Ջրամատակարարման դիմաց ստացվող հաշիվների ֆինանսական բեռը SS բյուջեի վրա

	Ծախսային քվինտիլ					Ընդամենը
	1 (ամենացածր)	2	3	4	5 (ամենաբարձր)	
2010թ.						
Ջրի համար միջին ամսական վճարումներ, դրամ	1,362	1,522	1,918	2,218	2,711	1,946
SS-ների միջին ամսական ծախսեր, դրամ	88,584	134,888	184,303	249,711	440,499	219,597
Միջին ամսական ՋԿԸ հաշիվների մասնաբաժինը SS ընդհանուր ծախսերում	1.5%	1.1%	1.0%	0.9%	0.62%	0.9%

2008թ. համար անցկացված հարցումը ցույց տվեց ջրամատակարարման ոլորտում ծրագրերի օգուտների՝ ըստ քվինտիլների բաշխման հետևյալ պատկերը.

<sup>11</sup> Ներառում է Երևան Ջուր ընկերության սուբսիդավորման՝ 663 մլն. ՀՀ դրամ գումարի չափով մոտավոր գնահատականը. փաստացի տվյալները հասանելի չեն:

Աղյուսակ 3. Ջրի միացումների բաշխումն ըստ քվինտիլների

	Ծախսային քվինտիլ				
	1 (ամենա- ցածր)	2	3	4	5 (ամենա- բարձր)
Խմելու ջրի մատակարարում (միացումներ ջրամատակարարման համակարգին), 2008թ.	19%	19.8%	19.9%	20.5%	20.8%

Այս համարյա հավասար բաշխումն, այնուամենայնիվ, արտացոլում է միայն ջրամատակարարման համակարգերին մատչումը, սակայն չի արտացոլում քվինտիլների միջև օգուտների բաշխման տարբերությունները՝ համակարգի “օգտագործման” կամ, ավելի շուտ, SS-ների կողմից ջրի փաստացի սպառման առումով: Դա գնահատելու համար օգտագործվել է 2010թ. հարցման տվյալները. նախ, բոլոր հարցված SS-ների համար հաշվարկվել են մեկ շնչին բաժին ընկնող վճարումները, այնուհետև մեկ շնչի հաշվով սպառումը գնահատվել է՝ հիմնվելով մեկ շնչին բաժին ընկնող վճարումների վրա<sup>12</sup>: Մեկ շնչի հաշվով սպառման գնահատականների վրա հիմնվելով՝ օգուտների բաշխման պատկերը փոփոխվում է՝ ինչպես ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 4. Մեկ շնչի հաշվով ջրի սպառումն ըստ քվինտիլների

<i>Օգուտների բաշխում</i>	<i>Ծախսային քվինտիլ</i>				
	1 (ամենա- ցածր)	2	3	4	5 (ամենա- բարձր)
<i>Օգուտների բաշխումը՝ կախված մեկ շնչի հաշվով սպառման ծավալներից, 2008թ.</i>	<i>9.6%</i>	<i>13.2%</i>	<i>17.0%</i>	<i>23.6%</i>	<i>36.6%</i>
<i>Օգուտների բաշխումը՝ կախված մեկ շնչի հաշվով սպառման ծավալներից, 2010թ.</i>	<i>10.6%</i>	<i>14.2%</i>	<i>17.5%</i>	<i>20.9%</i>	<i>36.8%</i>

*Կարելի է տեսնել, որ չնայած բոլոր 5 քվինտիլներում համակարգին մատչման հարաբերականորեն համամասնական բաշխմանը, ամենաաղքատ SS-ները շատ ավելի քիչ օգուտ են ստանում ջրի ոլորտում կառավարության ծախսային ծրագրերից, քան իրենց 20% մասնաբաժինն է: Այնուամենայնիվ, 2008 և 2010թթ. միջև գրանցվել է նշված բաշխման թեթև բարելավում, որը տեղի է ունեցել միայն Քվինտիլ 4-ի հաշվին: Սա կարելի է բացատրել այդ քվինտիլի սպառողական վարքի ճշգրտումով՝ բարձրացած սակագների արդյունքում:*

<sup>12</sup> Հնարավոր չէր նույնականացնել յուրաքանչյուր SS-ին ջուր մատակարարող ՋԿ ընկերությանը: Ավելին, սակագները փոխվում են յուրաքանչյուր տարվա ապրիլ-հունիս ամիսներին, այդ իսկ պատճառով, պարզության համար մեկ շնչի հաշվով սպառումը գնահատելու նպատակով կիրառվել է բոլոր 5 ընկերությունների միջին սակագինը: Քանի որ բոլոր 5 ընկերությունների սակագները զգալիորեն չեն տարբերվում և գտնվում են 1 ԽՄ-ի դիմաց 172-202 ՀՀ դրամ հարաբերականորեն նեղ միջակայքում, ապա արդյունքում ստացվող սխալը զգալի ազդեցություն չի ունենա օգուտների բաշխման վերլուծության վրա:

Մինչդեռ Քվինտիլ 5-ում օգուտների բաշխումը նույնիսկ մի փոքր՝ 0.2 տոկոսային կետով, ավելացել է:

Այսպիսով, հարցումը ցույց է տալիս, որ հարուստ SS-ները մոտ 4 անգամ ավելի շատ օգուտ են ստանում ջրային ոլորտի՝ կառավարության սուբսիդիաներից, քան՝ աղքատները (37%՝ համեմատած 11%-ի հետ): Չնայած ներկայիս քաղաքականությամբ սահմանված նպատակը ջրամատակարարման ծառայությունները մատչելի դարձնելն է՝ ենթադրաբար բնակչության ամենաաղքատ խմբերի համար, սակայն ուղղակի սուբսիդիաների միջոցով այդ նպատակը անկհայտորեն չի իրականացվում: Ցանկացած սուբսիդավորման ծրագրի թիրախավորումը կարելի է բարելավել՝ շահառուների խմբի շրջանակները սահմանափակելով ամենաաղքատ բնակչությամբ: Այս նպատակով անհրաժեշտ է վերլուծել, թե արդյո՞ք կարող է թիրախավորման բարելավումը բերել որոշակի օգուտներ, օրինակ՝ ոլորտում կատարվող ֆինանսական ներարկումների խնայողություններ, որոնք կարող են օգտագործվել նույն կամ մեկ այլ ոլորտում:

Հիմնական գաղափարն այն է, որ ավելի հարուստ տնային տնտեսությունները կվճարեն բարձրացված սակագներն ամբողջությամբ<sup>13</sup>, մինչդեռ ավելի աղքատները կսուբսիդավորվեն այնպիսի գումարով, որը կչեզոքացնի սակագնի բարձրացման ազդեցությունը: Այսպիսի պատկերն ամբողջովին համապատասխանում է վերը բերված Գծապատկերում ներկայացված՝ բ) պահանջարկի կողմ հատվածին:

Բնականաբար, բնակչության կողմից (հատկապես ամենացածր քվինտիլի) այս գաղափարի ընդունման վերաբերյալ թերահավատությունը վավեր է: Այդ պատճառով, ԱՄՏ-ն՝ իր վերջին հարցման ժամանակ, փորձեց պարզել քաղաքականության այլընտրանքների ընդունման հնարավոր մակարդակ: Ստորև ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ բնակչությունը պատրաստ է ընդունել մի փոքր ավելի բարձր սակագներ՝ այն դեպքում, եթե դրանք համատեղվեն ծառայության մատուցման բարելավումների հետ:

Մասնավորապես, 2011թ. ամռանն անցկացված հարցումը ներառում էր բարելավված ծառայությունների դիմաց վճարելու պոտենցիալ պատրաստակամության մասին հարց: Այդ հարցին տրված պատասխանները կարելի է ամփոփել ստորև ներկայացված աղյուսակում.

Աղյուսակ 5. Ավելի որակով ծառայությունների դիմաց ավել վճարելու հակվածությունն ըստ քվինտիլների

	1 (ամենա- ցածր)	2	3	4	5 (ամենա- բարձր)	Միջին
Ընդհանուր գումարը, որը պատրաստ են վճարել բարելավված ջրամատակարարման ծառայությունների դիմաց, ՀՀ դրամ, ամսական	1,657	1,702	2,031	2,380	2,855	2,125
Ավելացած միջին ամսական ՋնԿ հաշիվների մասնաբաժինը SS	1.9%	1.3%	1.1%	1.0%	0.65%	1.0%

<sup>13</sup> Տես քաղաքականության տարբերակների և խորհուրդ տրվող տարբերակի վերաբերյալ բաժինը:

ընդհանուր ծախսերում						
SS-ների ամսական վճարումների աճ, ՀՀ դրամ	295	180	113	161	144	179

Վերջին հարցումը ցույց տվեց, որ տնային տնտեսությունները պատրաստակամ են լրացուցիչ վճարել ամսական միջինում մոտ 179 ՀՀ դրամ՝ ջրամատակարարման բարելավված ծառայությունների դիմաց: Հատկանշական է, որ ամենաաղքատ քվինտիլի SS-ները պատրաստ են լրացուցիչ վճարել շատ ավելի մեծ գումար (295 ՀՀ դրամ), մինչդեռ ամենահարուստները՝ ընդամենը 144 ՀՀ դրամ<sup>14</sup>: Եթե էքստրապոլացնենք այն ամսական միջին գումարը, որը տնային տնտեսությունները պատրաստ են վճարել բարելավված ծառայությունների համար, իսկ այնուհետև հաշվի առնենք 5 ՋԿ ընկերությունների կողմից սպասարկվող միացումների/տնային տնտեսությունների թիվը (720,000), ապա արդյունքում կարելի է ստանալ 1.5 մլրդ. ՀՀ դրամ լրացուցիչ տարեկան ֆինանսական ներհոսքեր դեպի ՋԿ ընկերություններ (720,000 տնային տնտեսություններ \* 179 ՀՀ դրամ \* 12 ամիս = 1,544 մլն. ՀՀ դրամ): Այս գումարը մոտավորապես համարժեք է ներկայումս կառավարության կողմից ջրամատակարար ընկերություններին վճարվող սուբսիդիաների ծավալին, ինչը կրկին անգամ օժանդակում է այն գաղափարին, համաձայն որի Տարբերակ 2-ը նպատակահարմար քաղաքականության տարբերակ է՝ կառավարության կողմից դիտարկվելու համար:

Սա, մի կողմից, ցույց է տալիս ավել վճարելու՝ սպառողների պատրաստակամությունը և, մյուս կողմից, օժանդակում է այն գաղափարին, որ, ընդհանուր առմամբ, մատչելիության խնդիրներ չեն ծագի: Սակայն, չնայած Քվինտիլ 1-ի SS-ների՝ ներկայիս վճարումների համեմատ հավելյալ 300 ՀՀ դրամ վճարելու պատրաստակամությանը, նրանք պետք է վճարեն իրենց ընդհանուր ծախսերի համարյա 2%-ը, մինչդեռ ամենահարուստները կվճարեն իրենց ծախսերի ընդամենը **0.65%**-ի չափով: Չնայած այն փաստին, որ նույնիսկ աղքատ տնային տնտեսությունները կվճարեն իրենց ընդհանուր ծախսերի գումարի **2%**-ից պակաս չափով, կարելի է ակնկալել սակագնի բարձրացման ազդեցությունը չեզոքացնող որոշակի միջամտություններ՝ հաշվի առնելով ջրի սպառման առողջական, սանիտարական և սոցիալական ասպեկտները: ~~Taking into account health, sanitary and social aspects of the issue, one could conclude that the poorer households will need to be assisted in order to avoid affordability problems.~~

Միննույն ժամանակ, 1.5 մլրդ. ՀՀ դրամի չափով լրացուցիչ ֆինանսական միջոցները (այն գումարը, որով՝ համաձայն մեր հարցման, տնային տնտեսությունները պատրաստակամ են ավելացնել իրենց ընդհանուր ջրամատակարարման վճարումները) **ցույց են տալիս, որ կառավարությունը կարող է այս հարցում առաջ գնալ ընդհուպ մինչև ԾԱՎ հաշվետվությունում քննարկված Տարբերակ 2-ը (Գործառնական ծախսերի փոխհատուցման տարբերակ), այսինքն՝ կարող է բարձրացնել սակագները մինչև այն մակարդակը, որն ապահովում է գործառնական ծախսերի փոխհատուցում՝ միաժամանակ սակագների ավելացած մասի դիմաց փոխհատուցում տրամադրելով աղքատ տնային տնտեսություններին (կապիտալ ծախսերը կշարունակվեն ֆինանսավորվել կառավարության**

<sup>14</sup> Սա նույնիսկ չի հասնում ամենահարուստ քվինտիլի միջին ամսական հաշիվների մակարդակին, սակայն աղքատ քվինտիլի սահմանային հակվածությունն արժի նշել:

կողմից՝ որպես ջրամատակարար ընկերությունների սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ ներդրումներ): Հիմնավորումն այն է, որ գումարը, որը SS-ները պատրաստական են հավելյալ վճարելու մոտավորապես համարժեք է կառավարության՝ ՋԿ ընկերությունների գործառնական ճեղքվածքների ֆինանսավորման համար ներկայումս վճարվող սուբսիդիաներին<sup>15</sup>: Ասածը կարելի է նաև վերաձևակերպել՝ նշելով, որ Հայաստանի SS-ները չեն ցանկանում վճարել ծախսերի՝ կապիտալ վերանորոգման մասի համար, որը կառավարությունը ներկայումս ամբողջությամբ վճարում է:

Ամենացածր քվինտիլը ջրամատակարարման ծառայությունների համար կվճարի իրենց ծախսերի 1.9%՝ համաձայն վճարելու պատրաստականության իրենց գնահատականների, այսինքն՝ նրանք համարյա թե կհասնեն ենթադրվող մատչելիության սահմանին: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք աջակցել նրանց՝ նման տնային տնտեսությունների վրա սակագնի բարձրացման ազդեցությունը չեզոքացնելու նպատակով: Առաջարկվող սուբսիդավորման սխեման թույլ կտա նրանց՝ ջրամատակարարման վրա ծախսել նույն գումարը և սպառել նույն ծավալի ջուր՝ այլ հավասար պայմաններում (սակագնի բարձրացումից բխող տարբերությունը կվճարվի տնային տնտեսություններին, որպեսզի նրանք վճարեն ջրամատակարար ընկերությանը):

**Հատուկ հարց.** բյուջեից ի՞նչ ծավալի խնայողություններ կարող են լինել՝ սուբսիդավորման օբյեկտը փոխելու (միայն ամենակարիքավոր տնային տնտեսություններին սուբսիդավորելու) հետևանքով (մասնավորապես՝ վերացնելով ջրամատակարար ընկերությունների գործառնական ճեղքվածքները փակելու նպատակով տրվող ուղղակի սուբսիդիաները և ենթադրելով, որ կապիտալ ծախսերը կշարունակվեն ֆինանսավորվել կառավարության կողմից): Այլ խոսքերով, մեր կողմից դիտարկվող քաղաքականության հարցը խնդրին նայում է կառավարության տեսանկյունից՝ ենթադրելով, որ ծախսային յուրաքանչյուր հողվածում կատարվող խնայողությունը կարող է ուղղվել այլ հրատապ ծրագրի ֆինանսավորմանը, այդ թվում՝ նույն ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում: Հետևաբար, առաջարկվող քաղաքականության տարբերակի “արդյունքի” չափման միավոր է հանդիսանում “կառավարության ավելի ցածր ծախսերը”՝ նախկինում արձանագրված նույն արդյունքի համար:

~~Alternatively, the question can be reversed as follows: how many more households can be subsidized with the same amount as previously (spent by the government to directly subsidize companies) so that the tariff increase leaves no impact on these households.~~

<sup>15</sup> Սուբսիդիաների տարեկան ծավալը գնահատվել է մոտ 1.3 մլրդ. ՀՀ դրամ՝ ԾԱՎ շրջանակներում մշակված “մոդելային տարվա” համար:

## Քաղաքականության Այլընտրանքների Քննարկում և Լուծումների Մոդելավորում

### Քաղաքականության լուծումների նախապատմություն

Հիմնվելով կառավարության ընդհանուր երկարաժամկետ նպատակների և սակագների ու սուբսիդավորման ներկայիս վիճակի վրա՝ ԾԱՎ համար մշակել ենք հետևյալ տարբերակները.

- Տարբերակ 1 (**Ստատուս քվո**). Անորոշ ժամանակով շարունակել ներկայիս սուբսիդիաների և ներդրումների ֆինանսավորման պրակտիկան:
- Տարբերակ 2. Բարձրացնել սակագները մինչև այն մակարդակը, որն ապահովում է **գործառնական ծախսերի փոխհատուցում**՝ միաժամանակ սակագների ավելացած մասի դիմաց փոխհատուցում տրամադրելով աղքատ տնային տնտեսություններին (կապիտալ ծախսերը կշարունակվեն ֆինանսավորվել կառավարության կողմից՝ որպես ջրամատակարար ընկերությունների սեփականատիրոջ կամ համասեփականատիրոջ):
- Տարբերակ 3. Բարձրացնել սակագները՝ **ծախսերի ամբողջական փոխհատուցում**ն ապահովելու նպատակով (ներառյալ կապիտալ ծախսերը)՝ զուգահեռաբար աղքատ տնային տնտեսություններին փոխհատուցելով բարձրացումն այնպես, որ նրանց վրա սակագնի աճի ազդեցությունը լինի զրոյական:

Ակնհայտորեն, Տարբերակ 3-ը չի դիտարկվում որպես կիրառական տարբերակ կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում մի շարք պատճառներով, ինչպիսին են՝ մատչումն արտոնյալ դոնորային ֆինանսավորմանը, ինչպես նաև բնակչության կողմից օժանդակվող՝ սակագների սահմանային բարձրացումը: Սակայն այս այլընտրանքը կարող է արժանի լինել քննարկման՝ տնային տնտեսությունների և կառավարության բյուջեի վրա պոտենցիալ ազդեցության չափի գնահատման համար այն դեպքում, եթե սակագներն աստիճանաբար բարձրացվեն՝ ծառայությունների մատուցման արժեքն ամբողջությամբ փոխհատուցելու նպատակով: Պարզ է նաև, որ արտոնյալ դոնորային միջոցներով կապիտալ ֆինանսավորումն շատ ավելի նախընտրելի տարբերակ է քան սակագների բարձրացումը՝ այնքան ժամանակ, քանի դեռ նման միջոցները հասանելի են: Սակայն երկարաժամկետ հեռանկարում երկկողմանի և բազմակողմանի դոնորները կարող են իրենց միջոցներն ուղղել դեպի այլ ոլորտներ (կամ դադարեցնել Հայաստանին արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրումը), ինչից հետո կմնա երկու հնարավոր տարբերակ. բոլոր կապիտալ ծախսերի ֆինանսավորում կառավարության կողմից՝ ընդհանուր հարկերից, կամ բեռի ամբողջական կամ մասնակի փոխանցում սպառողներին՝ սակագների միջոցով: Ակնհայտորեն, կարող է լինել նաև մեկ այլ տարբերակ, որն իրենից ներկայացնում է նախորդ երկուսի միջանկյալ համադրությունը. սակագների աստիճանական կամ մասնակի ավելացում՝ ներառելով կապիտալ ծախսերը, սակայն ներդրումների մի մասը շարունակելով ֆինանսավորել կառավարության կողմից: Այսպիսով, խելամիտ է գնահատել սակագների վրա պոտենցիալ ազդեցությունը և հետո քննարկել քաղաքականության տարբերակները:



Ընդհանուր առմամբ, գոյություն ունի մեկ ուրիշ անուղղակի պատճառ նրա, թե ինչու Տարբերակ 3-ը հրատապ հետաքրքրություն չի ներկայացնում. անհրաժեշտ ներդրումների ծավալը պետք է հստակորեն սահմանվի և գնահատվի: Տարբեր աղբյուրներ նշում են, ու ներդրումների պահանջը հսկայական է, մինչդեռ ցանկալի ծառայության մակարդակներին հասնելու համար գոյություն ունեցող կամ պոտենցիալ ֆինանսավորումը շատ սահմանափակ է: Օրինակ, համաձայն Համաշխարհային Բանկի գնահատականների<sup>16</sup> հաջորդ 5 տարիների ընթացքում Երևան Ջուր և Հայջրմուղկոյուղի ընկերությունների սպասարկման տարածքներում հրատապ ներդրումային կարիքների համար անհրաժեշտ է 179 մլն. ԱՄՆ դոլար, իսկ ապագա ներդրումների երկարաժամկետ անհրաժեշտությունը գնահատվում է մոտ 1.6 մլրդ. ԱՄՆ դոլարի սահմաններում (1 մլրդ. ԱՄՆ դոլար՝ Երևան Ջուր ընկերության և 0.6 մլրդ. ԱՄՆ դոլար՝ ՀԶԿ ընկերության համար): Կարևոր է նշել, որ համակարգի ընդլայնման կարիք չկա, քանի որ բնակչության ճնշող մեծամասնությունն արդեն իսկ միացած է ջրամատակարարման համակարգին: Ինչպես նշված է նույն հաշվետվությունում, չհաշվառված ջրի ցուցանիշը ծայրահեղ բարձր է՝ բոլոր միջազգային ստանդարտների համեմատությամբ և կազմում է 75-85%, ինչը բացատրվում է, նախ, շատ հին և վատթար ֆիզիկական ենթակառուցվածքներով և, երկրորդ՝ անբավարար ջրաչափումով պայմանավորված և համակարգի տարբեր մակարդակներում առկա կոմերցիոն կորուստներով: ՀԲ-ն՝ իր գնահատականներում, միտում ունի կարծելու, որ կորուստների 40%-ը կազմում են կոմերցիոն կորուստները, իսկ 40-45%-ը՝ տեխնիկական կորուստները և հոսակորուստները: Սա նաև ազդում է շահագործման ծախսերի վրա, քանի որ մաշված համակարգը պահանջում է ավելի մեծ ծավալի վերանորոգումներ և բարձրացնում է ջրարտադրության կարիքը՝ բաժանորդների կարիքները բավարարելու և ծառայության մատուցման ցուցանիշներին համատասխանելու համար:

## Քաղաքականության Այլընտրանքների Քննարկում (Քաղաքականությունների Ազդեցության Մոդելավորում)

Մոտավոր տարբերակները մշակվել են հիմնվելով հետևյալի վրա.

- վերջին շրջանի միջին սպառման կառուցվածքը՝ 2005-2010թթ. համար<sup>17</sup>,
- փաստացի վճարներ – միջոցների ստացում բաժանորդներից և կառավարությունից (համեմատած վաճառքներին, որոնք հաշվարկվում են սահմանված սակագների հիման վրա)<sup>18</sup>,
- վերջին մի քանի տարում կատարված կապիտալ ծախսեր (համեմատած ակտիվների մաշվածության հետ, որը լավագույն տարբերակով պետք է սակագնի մաս կազմի)<sup>19</sup>,
- Տնային տնտեսությունների միջին թիվը, որոնք կանոնավոր կերպով ստացել են ընտանեկան նպաստներ 2007-2009թթ. ընթացքում (117,779 տնային տնտեսություններ)

<sup>20</sup>:

<sup>16</sup> Հայաստանի Հանրապետություն. Նոթեր Ջրամատակարարման Ոլորտի Մասին, Մայիս 2011թ., Համաշխարհային Բանկ, էջեր 46-47

<sup>17</sup> ԶԿԸ-ների հաշվետվությունները ՀԾԿՀ-ին, ՋՏՊԿ-ի հաշվետվություններ: [www.psrc.am](http://www.psrc.am), [www.scws.am](http://www.scws.am).

<sup>18</sup> [www.psrc.am](http://www.psrc.am)

<sup>19</sup> 2005-2009թթ. պետական բյուջեի մասին օրենքներ

<sup>20</sup> [www.mss.am](http://www.mss.am)

Ավելին, հաշվի առնելով այն փաստը, որ վերջին 5-7 տարիների ընթացքում ընկերություններում իրականացվել են զգալի բարեփոխումներ և փոփոխություններ, սահմանվել է “մոդելային տարի”, որն արտացոլում է ոլորտում առկա ամենաթարմ իրավիճակը: Մասնավորապես, մոդելում կիրառված գլխավոր ենթադրությունները և գնահատականները հետևյալն են.

- Բաժանորդներին ջրի ծավալային մատակարարումը՝ Տարբերակ 1. անցած տարիների ընթացքում բաժանորդների կողմից ջրի սպառման միտումը նվազել է: Դրա վրա ազդել են երկու հիմնական գործոններ. (i) տնային տնտեսություններում ջրաչափերի տեղադրում և (ii) սակագնի աստիճանական բարձրացում: Սակագների բարձրացման առաջարկ ներառող մոդելի մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ջրի սպառման էլաստիկություն՝ սակագների բարձրացման դեպքում: SS-ների մասին հասանելի տվյալներից ելնելով՝ հնարավոր չի գնահատել ջրի պահանջարկի “փաստացի” գնային էլաստիկությունը Հայաստանում: Փոխարենը մենք հիմնվել ենք Նուժեի և Ուիթինգթոնի կողմից՝ “Ջրի պահանջարկի գնահատում զարգացող երկրներում. Ընդհանուր պատկեր” փաստաթղթում տրված բացահայտումների և եզրակացությունների վրա: Նշված փաստաթղթի եզրակացությունների համաձայն՝ մասնավոր միացումների ջրի սեփական գնային էլաստիկությունը գնահատվում է  $-0.3$  մինչև  $-0.6$  սահմաններում: Հիմնվելով նշված գնահատականների, ինչպես նաև առկա տվյալներում էլաստիկության որևէ գործակցի բացակայության վրա՝ մենք ընտրեցինք  $-0.5$ -ին հավասար գնային էլաստիկության գործակցից: Այսպիսով, եթե սակագները բարձրացվեն  $16\%$ -ով՝ ինչպես ընդունել ենք Տարբերակ 1-ում, ապա ջրի ընդհանուր սպառումը (վաճառքները) կշարունակեն նվազումը՝ մոտ  $8\%$ -ի չափով: Սա ենթադրում է, որ Տարբերակ 1-ի մոդելային տարում մատակարարված և բաժանորդների կողմից սպառված ջրաքանակը կնվազի մինչև  $78.5$  մլն. ԽՄ՝  $5$  գլխավոր ընկերությունների համար: Սակագնի բարձրացման այսպիսի մագնիտուդը գտնվում է այն սահմաններում, որին վերջին մի քանի տարիներին առերեսվել են Հայաստանի SS-ները և բարձրացմանը տրվող արձագանքը՝ սպառողական վարքի տեսանկյունից, համահունչ կլինի վերջին տարիներին արձանագրված միտումներին: Բաժանորդներին ջրի ծավալային մատակարարումը՝ Տարբերակ 2. Տարբերակ 1-ը և 2-ը համեմատելու նպատակով կատարվում են հաշվարկներ և համեմատություններ՝ հիմնվելով SS-ների կողմից ջրի սպառման նույն գնահատականի վրա: Այսինքն, մենք կանխամտածված ենթադրել ենք, որ SS-ները երկու դեպքում էլ անտարբեր կլինեն սակագնի բարձրացման նկատմամբ՝ արդյունքները համեմատելի դարձնելու նպատակով: Սակայն, սակագնի՝ մոտ  $70\%$  բարձրացման մասին խոսելիս չպետք է անտեսել էլաստիկության գործոնը: Այդ իսկ պատճառով, էլաստիկության հաշվարկները ներկայացված են առանձին (Տե՛ս Ջրի պահանջարկի գնային էլաստիկություն բաժինը՝ Տարբերակ 2-ի համար)՝ արդյունքների բացատրության հետ միասին:
- Տարեկան կապիտալ ծախսերի ծավալներ. վերցվել է վերջին 5 տարիների միջինը, որպեսզի չեզոքացվեն տարեկան տատանումների ազդեցությունները, որոնք սովորաբար պայմանավորված են մեկնարկում ծրագրի իրականացման ցածր արագությամբ և ծրագրի ավարտին մոտ գրանցվող՝ շատ ավելի բարձր տեմպով: Կապիտալ ներդրումներն

անհրաժեշտ են մաշված ակտիվների փոխարինման և համակարգի օպտիմալացման համար: Համակարգի ընդլայնման մեծ կարիք չկա՝ երկրում առկա մատչյալ բարձր աստիճանի պատճառով (Տե՛ս Շրջանակ 1): Փաստացի տվյալները որպես հիմք օգտագործելով՝ անհրաժեշտ ներդրումների ծավալը չափազանցնելու ռիսկ չկա, քանի որ տարբեր ուսումնասիրությունների արդյունքներով ներդրումների ընդհանուր պահանջը գնահատվել է 400-800 մլն. ԱՄՆ դոլարի միջակայքում:

- Սակագներ և հավաքագրման մակարդակներ. վերջին 3-4 տարիների համար հավաքագրման մակարդակը կազմել է ներկայացված հաշիվների շուրջ 90%, որը ենթադրում է, որ տնային տնտեսությունների փաստացի “բեռը” ավելի ցածր է, քան այն կլիներ, եթե հաշվարկվեր կարգավորողի կողմից սահմանված սակագներով: Մյուս կողմից, սա հենց այն պատճառն է, որով կառավարությունը սուբսիդավորում է այս ընկերություններին: Այսպիսով, տնային տնտեսությունների համար փաստացի միջին “գործող” սակագինը կլինի. ընդհանուր վճարված գումարը բաժանած հաշվառված և հաշիվներով ներկայացված ջրի ծավալների վրա: (Ենթադրվել է, որ Կարգավորողի կողմից սահմանված սակագները 2009թ. համեմատ կմնան անփոփոխ):
- Ստատուս քվո տարբերակում սուբսիդիաների գումարը. (i) Որպես հիմք է ընդունվել վերջին 3 տարիների միջինը: Ի լրումն, ներառվել է Երևանի քաղաքապետարանի կողմից հնչեցված սուբսիդիաներին համարժեք գումար (սպառողներին մատակարարված տարեկան ջրաքանակը՝ բազմապատկած պահանջված և հաստատված սակագների միջև առկա տարբերությունով՝ 14 դրամ մեկ ԽՄ դիմաց); (ii) Օգտագործվել է վերջին 5 տարիների համար կառավարության կողմից ոլորտում ֆինանսավորված կապիտալ ծախսերի միջին մեծությունը:

Ակնհայտ է, որ վերը բերված ենթադրությունները կախված են տարբեր գործոններից և, այդպիսով, նրանք մեծ ազդեցություն կունենան մեր մոդելից բխող սակագների մակարդակի վրա: Դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունները կորոշեն այն մագնիտուդը, որով անհրաժեշտ կլինի ճշգրտել սակագները՝ տարբերակներից ցանկացածի համար: Ինչևէ, փոխհատուցման մոդելը կարող է կիրառվել անկախ սակագնի բարձրացման մագնիտուդից կամ, նույնիսկ, շահառուների ընտրությունից (օրինակ՝ միայն Քվինտիլ 1-ի SS-ները կամ Քվինտիլ 2-ի SS-ների մի մասը ևս):

Շրջանակ 1: Ներդրումների Գնահատականները. Կապիտալ Ծախսեր թե՛  
Մաշվածություն

Եթե ջրամատակարարման և ջրահեռացման բոլոր ծախսերը երբևէ ենթակա լինեն սակագների միջոցով ֆինանսավորման, ապա սակագնի հաշվարկի ժամանակ ավելի շուտ կարող էինք մտածել ակտիվների՝ ողջ կյանքի տևողության ընթացքում տարեկան մաշվածության արժեքները հաշվի առնելու ուղղությամբ՝ կապիտալ ծախսերի գնահատականների փոխարեն, քանի որ վերջիններս մեծ տատանումների միտում ունեն՝ ֆինանսական միջոցների հասանելիության և/կամ ծավալի պատճառով: Սակայն, մի շարք պատճառներով, այդ մոտեցումը տվյալ պահին նպատակահարմար չի թվում.

- Ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայումս հայտնի չէ, քանի որ ակտիվները հիմնականում շատ հին են և գալիս են դեռևս Խորհրդային ժամանակաշրջանից, իսկ նրանց վերագնահատված արժեքը չի արտացոլում փաստացի արժեքը, որն անհրաժեշտ կլինի ներառել սակագնի մեջ: Հիմնական ՋԿ ընկերությունները ներկայումս նախաձեռնել են ակտիվների վերագնահատման գործողություններ, սակայն ներկա հետազոտության ժամկետների սահմաններում դրանց արդյունքների ստացում չի ակնկալվում;
- Փոխարինման արժեքը ևս համարժեք մեթոդ չէ, քանի որ ներդրումների հասանելի գնահատականները չափազանց կոպիտ են և, հիմնականում, ավելի շուտ ցույց են տալիս ներդրումների մոտավոր մակարդակը, քան՝ փաստացի ներդրումների կարիքները:

Այդ իսկ պատճառով, շատ ավելի պահպանողական մոտեցում է հանդիսանում վերջին տարիների փաստացի կապիտալ ծախսերի մասին տվյալների օգտագործումը, որոնք տարիների ընթացքում զգալիորեն տատանվում են, սակայն ցույց են տվել աճի միտում (10.8 մլրդ. ՀՀ դրամ՝ 2009թ., 13.0 մլրդ. ՀՀ դրամ՝ 2010թ. և 15.3 մլրդ. ՀՀ դրամ՝ 2011թ., ի տարբերություն 2006-2008թթ. 4-5 մլրդ. ՀՀ դրամի): Համեմատության համար, 2011թ. -ի 15.3 մլրդ. ՀՀ դրամ կապիտալ ծախսերը համարժեք են 40 մլն. ԱՄՆ դոլարին:

Տարբերակները կարելի է համեմատել հիմնվելով կառավարության բյուջեի վրա դրանց ընդհանուր ազդեցության (արժեքի) վրա, քանի որ ենթադրվում է, որ աստիճանաբար (և վերջիվերջո) սպառողները ստիպված են լինելու վճարել իրենց կողմից սպառվող ծառայությունների ամբողջ արժեքը: Ինչևէ, ջրի սպառումն ավելի շուտ որոշվում է տնային տնտեսության մակարդակով, քան՝ անհատների, քանի որ տնային տնտեսություններում շատ աշխատանքներ կատարվում են “կենտրոնացված” մակարդակով: Այդ պատճառով մենք նախընտրեցինք բոլոր հաշվարկներն իրականացնել տնային տնտեսության մակարդակով:

Ընդունելով, որ սուբսիդավորման ծրագիրն իր էությամբ դեպի աղքատներն ուղղված քաղաքականության գործիք է և ձգտում է երկրի բնակչության ամենաաղքատ շերտերին ապահովել որոշակի ծառայությունների կամ ապրանքների բարելավված հասանելիություն և մատչելիություն, կարելի է վերցնել աղքատների քանակը՝ ԾԱ գործակիցները հաշվարկելու նպատակով: Հայաստանում սոցիալական աջակցության ծրագրերն իրականացվում են

հիմնականում Ընտանեկան Նպաստների Ծրագրի միջոցով<sup>21</sup>, որի թիրախն են հանդիսանում ամենաաղքատ տնային տնտեսությունները: Համաձայն ՀԲ “Հայաստան. 2008-09թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամ, քաղաքականության արձագանքներ և տնային տնտեսությունների կողմից հաղթահարման ռազմավարություններ” հաշվետվության (2010թ.)<sup>22</sup>, “Ընտանեկան Նպաստների ծրագրի միջոցների մոտ 61% ուղղվել է դեպի ամենացածր քվինտիլը՝ այն դարձնելով տարածաշրջանի լավագույնս թիրախավորված ծրագրերից մեկը: Այսպիսով, ցանկացած սուբսիդավորման կամ աջակցության ծրագրի համար Ընտանեկան Նպաստների ծրագրի շահառուներին որպես թիրախային խումբ ընտրելն ավտոմատ կերպով կապահովի աջակցության թիրախավորում՝ խելամիտ համարժեքությամբ:

Տնային տնտեսությունը իրավունք է ստանում ընդգրկվելու Ընտանեկան Նպաստների ծրագրում, եթե այն բավարարում է որոշակի չափանիշների. տնային տնտեսության ընդհանուր գնահատականի հաշվարկման համար օգտագործվում են տարբեր պարամետրեր, ինչպիսիք են՝ տնային տնտեսության անդամներից յուրաքանչյուրի սոցիալական խումբը, անաշխատունակ անձանց թիվը, բնակավայրը, կացարանային պայմանները, միջին ամսական եկամուտը և այլն: 2007-2009թթ. ընթացքում միջին հաշվով 117 779 տնային տնտեսություններ ստացել են ընտանեկան նպաստներ<sup>23</sup>: Այսպիսով, կարելի է այս թիվն ընդունել որպես լավ հիմք՝ աղքատ տնային տնտեսությունների, այսինքն՝ Հայաստանում իրականացվող ցանկացած սուբսիդավորման ծրագրի առաջնային թիրախային շահառուների, թվաքանակի համար: ԾԱ գործակիցների մեր հաշվարկում այս թիվն ընդունվել է որպես շահառուների թիվը:

---

<sup>21</sup> ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջոցով, [www.mss.am](http://www.mss.am)

<sup>22</sup> Էջ 28, կետեր 4.22, 4.25

<sup>23</sup> Տարեկան Բյուջեի հաշվետվություններ, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 2007թ., 2008թ., 2009թ.

## Շրջանակ 2: Ընտանեկան Նպաստների համակարգը Հայաստանում

Ընտանեկան Նպաստը (ԸՆ) Հայաստանի գլխավոր վերջին ատյանի սոցիալական աջակցության ծրագիրն է, որի նպատակն է բնակչության ծայրահեղ աղքատ և խոցելի խմբերի պաշտպանությունը: 1990-ական թթ. վերջում Հայաստանը բարեփոխից իր սոցիալական աջակցության համակարգը՝ ինտեգրելով ըստ դասերի թիրախավորված ծրագրերն անապահովության գնահատման մի տարբերակում՝ նպատակային շահառուներին թիրախավորելու համար: Արդյունքը եղավ մի պարզ, դրամական օգնության համակարգ, որն առաջնահերթություն է տալիս տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց և երեխաներ ունեցող աղքատ ընտանիքներին: Նշված փոփոխությունների արդյունքում, մասնակցություն չպահանջող սոցիալական ապահովության ծրագրերը ներառում են մեկ հիմնական, աղքատության դեմ ուղղված մոդել՝ Ընտանեկան նպաստ (ԸՆ), որը նախատեսված է ցածր եկամուտներ ունեցող և խոցելի տնային տնտեսությունների համար: ԸՆ-ի դեպքում անապահովության գնահատումը կատարվում է եկամտի և աղքատության այլ ռիսկային գործոնների մասով և դրա թիրախն են հանդիսանում ամենախոցելի ընտանիքները: ԸՆ-ի շահառուները նաև իրավունք են ստանում օգտվելու տարրական առողջապահական անվճար փաթեթից:

ԸՆ-ի թիրախավորումը կատարվում է կիրառելով այսպես կոչված՝ տնային տնտեսության անապահովության և խոցելիության գնահատման բանաձևը: Գնահատման բանաձևը դիմողներին դասակարգում է նրանց ակնկալվող աղքատության առումով: Բանաձևը նախապատվությունը տալիս է որոշակի սոցիալական խմբերին, ինչպիսիք են՝ հաշմանդամները, միայնակ մայրերը, որբերը և բազմազավակ ընտանիքները, ինչպես նաև հաշվի է առնում մի շարք այլ փոփոխականներ, ինչպիսիք են՝ եկամուտը, բնակության վայրը և պայմանները, սեփական ավտոմեքենա ունենալը և կոմունալ վճարումները:

ԸՆ-ին՝ Հայաստանի գլխավոր սոցիալական աջակցության ծրագրին, ուղղվում է սոցիալական աջակցության ծրագրերի ընդհանուր ծախսերի մոտ 60%: ՀՆԱ-ում ունեցած մասնաբաժնի առումով, Հայաստանի սոցիալական աջակցությանն ուղղվող ծախսերը նույն մակարդակի վրա են, ինչ Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի միջին 1.7 տոկոսը, սակայն ավելի փոքր են քան ՏՀԶԿ երկրների միջին 2.5 տոկոսը:

2009թ. մոտ 107 հազար տնային տնտեսություններ ստացել են ընտանեկան նպաստներ, ընդ որում ծրագրի միջոցների մոտ 61 տոկոսն ուղղվել են առաջին քվինտիլի ընտանիքներին՝ այն դարձնելով տարածաշրջանի ամենալավ թիրախավորված ծրագրերից մեկը:

Աղբյուրը՝ Համաշխարհային Բանկ, Հայաստան. Համաշխարհային Բանկ, Հայաստան. 2008-09թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը, քաղաքականության արձագանքները և տնային տնտեսությունների կողմից հաղթահարման ռազմավարությունները, 2010թ.; ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2009թ. հաշվետվությունը, [www.mss.am](http://www.mss.am)

Տարբերակների արդյունավետության գնահատումը հիմնված է ցանկացած ոլորտի սուբսիդավորման տնտեսական սահմանման ֆունդամենտալ սկզբունքի վրա, այսինքն՝ ներկա քաղաքականությունն ունի թիրախավորման պակաս և «բոլորի սուբսիդավորումը»

գուգահեռաբար բոլորից հարկեր հավաքելով և բոլորի համար նույն սակագները կիրառելով՝ տնտեսապես անիմաստ և անպետք քաղաքականություն է: Այդ իսկ պատճառով, արդյունավետության չափման հիմնաքարն է հանդիսանում շահառուների սահմանումը որպես այն անձինք, որոնք իրոք կարող են լինել սուբսիդիաների ստացողներ, այսինքն՝ նրանք, ովքեր կարիքավոր են: Հայաստանի ենթատեքստում դա բնակչության ամենացածր քվինտիլն է: Այսպիսով, արդյունավետության գնահատման մեթոդաբանությունն է. քաղաքականության տարբերակների իրական արժեքի որոշումն այդ քաղաքականության իրական շահառուի համար (ներառյալ ներկա քաղաքականությունը):

Հաշվարկված տարբերակների արդյունքներն ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակում:

**Աղյուսակ 6: Հաշվարկների արդյունքներ (տարբերակների մոդելավորում)**

	Տարբերակ 1 (Ստատուս քվո)	Տարբերակ 2 (Գործառնական ծախսերի փոխհատուցում)	Տարբերակ 3 (Բոլոր ծախսերի փոխհատուցում)
Սակագնի մակարդակի բարձրացում, %	անփոփոխ	16%	69%
Սուբսիդիաներ ջրային ընկերություններին, մլն. ՀՀ դրամ	1,967.0	0	0
Նպաստներ (փոխհատուցում) աղքատներին, մլն. ՀՀ դրամ		331.3	1,419.6
Կառավարության կողմից ֆինանսավորված կապիտալ ծախսեր, (2005-09թթ. միջինը), մլն. ՀՀ դրամ	6,460	6,460	0
Ընդամենը, ծախսեր բյուջեից <sup>24</sup> , մլն. ՀՀ դրամ	8,427.5	6,791.8	1,419.6

Տարբերակ 2-ը ենթադրում է, որ ոչ աղքատ տնային տնտեսությունները կարող են կրել սակագների՝ մինչև գործառնական ծախսերի փոխհատուցման մակարդակը բարձրացման բեռն (16% բարձրացում ներկա մակարդակից) առանց մատչելիության հետ կապված խնդիրների: Սակայն, 1-ին քվինտիլի աղքատ տնային տնտեսությունների վրա սակագների բարձրացման ազդեցությունները չեզոքացնելու նպատակով, կառավարությանն անհրաժեշտ կլինի փոխհատուցումներ տրամադրել (առնվազն միջնաժամկետ հատվածում, սակայն դա կարող է լինել նաև երկարաժամկետ լուծում) մոտ 117 հազար տնային տնտեսությունների (մոտ 460 հազար անհատների)՝ 331.3 մլն. ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

Գումարների միջև մոտ 1.6 մլրդ. ՀՀ դրամ տարբերությունը (1,967 - 331.3 = 1635.7) կվճարվի 2-5 քվինտիլների ոչ աղքատ տնային տնտեսությունների կողմից՝ ըստ իրենց սպառման ծավալների համամասնության<sup>25</sup>:

<sup>24</sup> Ներառում է նաև Երևանի քաղաքապետարանի կողմից՝ սակագնի բարձրացումը (14 ՀՀ դրամ մեկ ԽՄ-ի դիմաց) մերժելու համար որպես փոխհատուցում վճարված սուբսիդիաները կես տարվա համար:

<sup>25</sup> Խմելու ջրի մատակարարման համակարգին միացման մասով օգուտի բաշխումը տատանվում է քվինտիլ 2-ի 19.75%-ի և քվինտիլ 5-ի 20.85%-ի միջև: Օգուտի Բաշխման Վերլուծություն, Հանրային

Տարբերակ 3-ում նպատակ է եղել գնահատել այն գումարի մեծությունը, որն անհրաժեշտ կլինի փոխհատուցման տեսքով վճարել աղքատներին, եթե սակագինը սահմանվի ծառայությունների ողջ արժեքը փոխհատուցելու մակարդակի վրա (ներառյալ տարեկան կապիտալ ծախսերի գումարները՝ որպես հիմնական միջոցների մաշվածության փոխհատուցում): Վերջին տարիների տվյալների համաձայն, անհրաժեշտ կլինի սակագները բարձրացնել 69%-ով՝ ոչ միայն ընդհանուր գործառնական ծախսերը, այլ նաև միջին տարեկան կապիտալ ծախսերի մոտ 6.5 մլրդ. ՀՀ դրամ գումարը: Այլ հավասար պայմաններում, նման թանկացումը կհանգեցնի տնային տնտեսությունների ընդհանուր ծախսերում ջրամատակարարման և ջրահեռացման (ՋևՋ) ծախսերի մասնաբաժնի ավելացմանը նույն չափով: Ստորև տրված աղյուսակում ներկայացվում են տնային տնտեսությունների ծախսերի կառուցվածքում ՋևՋ ծառայությունների դիմաց վճարների միջին մասնաբաժիններն ըստ քվինտիլների, ինչպես նաև նույն մասնաբաժիններն այն դեպքում, եթե սակագները բարձրացվեն մինչև ծախսերի ամբողջական փոխհատուցման մակարդակը:

**Աղյուսակ 7: ՋևՋ միջին ամսական հաշիվները Ստատուս քվոյի և այլ քննարկված տարբերակների դեպքում**

	SS միջին ամսական հաշիվները, ՀՀ դրամ	Ստատուս քվոյի համեմատ բարձրացումը
Ստատուս քվո	1,453.0	
Տարբերակ 2	1,687.4	234.4
Տարբերակ 3	2,457.4	1004.4

2-5 քվինտիլների համար մասնաբաժինն ընդհանուր ծախսերում կպահպանվի 2.5%-ից ցածր մակարդակում: Այսպիսով, սակագների նման բարձրացումը չպետք է լուրջ խնդիրներ ստեղծի ոչ աղքատ տնային տնտեսությունների համար: Ինչ վերաբերվում է քվինտիլ 1-ի տնային տնտեսություններին, ապա նոր սակագների բեռը կարող է բավականին զգալի լինել:

**Աղյուսակ 8. Տնային տնտեսությունների ներկա և հնարավոր ծախսերը (մասնաբաժինը SS բյուջեներում)**

	ՋևՋ վճարների մասնաբաժինը տնային տնտեսությունների ծախսերում, 2009թ. <sup>26</sup>	ՋևՋ վճարների մասնաբաժինը տնային տնտեսությունների ծախսերում, սակագների 69%-ով բարձրացման դեպքում
Ք1	2.16%	3.65%
Ք2	1.50%	2.53%
Ք3	1.34%	2.26%
Ք4	1.21%	2.05%
Ք5	0.76%	1.28%

Այսպիսով, ևս մեկ անգամ, քվինտիլ 1-ին (հնարավոր է նաև քվինտիլ 2-ի որոշ SS-ներին) անհրաժեշտ կլինի փոխհատուցում՝ մատչելիության հետ կապված հնարավոր խնդիրները չեզոքացնելու կամ մեղմացնելու նպատակով: Եթե կառավարությունն ընտրի այս տարբերակի ամբողջական կիրառումը, ապա փոխհատուցումների ընդհանուր գումարը կհասնի մինչև 1419.1 մլն. ՀՀ դրամ՝ ընտանեկան նպաստների ծրագրում ներառված ամենաաղքատ տնային տնտեսությունների մասով: Նշված գումարը բավարար կլինի

Ծախսերի Հաշվետվողականության Բարելավման Նպատակով Ինստիտուտների Չարգացման Ծրագիր, Առաջադեմ Սոցիալական Տեխնոլոգիաներ, Հայաստան 2010թ.

<sup>26</sup> ԱՍՏ կազմակերպության հարցում, 2009թ.



“գործող” սակագները ներկայիս՝ 155 ՀՀ դրամ միջին մակարդակից մինչև 263 ՀՀ դրամ բարձրացնելու ազդեցությունները չեզոքացնելու համար: Արժե նշել, որ 1419.1 մլն. ՀՀ դրամ գումարն արդեն իսկ ներառում է այն փոխհատուցումները, որոնք անհրաժեշտ են սակագները մինչև գործառնական ծախսերի փոխհատուցման մակարդակը բարձրացնելու դեպքում (331.3 մլն. ՀՀ դրամ), մինչդեռ 1088.3 մլն. ՀՀ դրամ գումարը կլինի աղքատների կողմից “մասնակցություն” կապիտալ ծախսերի համար անհրաժեշտ միջոցների ֆոնդին: Այդ պատճառով, ոչ աղքատ տնային տնտեսությունները կվճարեն գործառնական և կապիտալ ծախսերի մնացած համապատասխան մասերի համար:

Ինչպես նշվել է վերը, կառավարությունը ներկայումս սուբսիդավորում է ՋևՋ ընկերություններին՝ և՛ գործառնական և՛ կապիտալ ծախսերի մասով, որպեսզի խուսափի սակագները կտրուկ բարձրացնելու անհրաժեշտությունից: Տրամաբանական է, որ ցանկացած սուբսիդավորման կամ սակագները ցածր, մատչելի մակարդակում պահելու քաղաքականությունն ուղղված է բնակչության աղքատ շերտերին: Այլ խոսքերով, կառավարությունն արձագանքում է ջրին մատչման հետ կապված սոցիալական, առողջական և այլ մտահոգություններին: Չնայած, որ ծառայություններին մատչման տեսանկյունից ներկա քաղաքականությունը ծածկում է բոլոր 5 քվինտիլները համարյա հավասարաչափ, այն հարուստներին մոտ 4 անգամ ավելի շատ օգուտ է բերում, քանի որ մեկ շնչի հաշվով նրանց սպառումը շատ ավելի բարձր է: Տրամաբանորեն մատչելիությունը լուրջ մտահոգություն է աղքատների, այսինքն Քվինտիլ 1-ի և, մասնակիորեն, Քվինտիլ 2-ի համար: Այլ կերպ ասած, բոլոր հարկատուները վճարում են բոլոր 5 քվինտիլներին մատուցված ծառայությունների մասի համար, ինչն ակնհայտորեն ավելի շատ օգուտ է բերում հարուստ ՏՏ-ներին քան՝ աղքատներին: Այնուամենայնիվ, ցանկացած սուբսիդավորման ծրագրի թիրախավորումը կարող է բարելավվել՝ շահառուների խումբը սահմանափակելով ամենաաղքատ բնակչությամբ: Այսինքն, հարկատուները կարող են դրամ “խնայել”՝ վճարելով միայն ամենաաղքատ տնային տնտեսություններին մատուցված ծառայությունների ցանկացած նախատեսված մասի համար:

Ընդհանուր առմամբ, կառավարության վրա ընդհանուր ազդեցությունը կլինի հետևյալը.

- Տարբերակ 2-ի դեպքում կկրճատվի 8.4 մլրդ. ՀՀ դրամից մինչև 6.8 մլրդ. ՀՀ դրամ (1.6 մլրդ. դրամ խնայողություն),
- Տարբերակ 3-ի դեպքում՝ կկրճատվի 8.4 մլրդ. ՀՀ դրամից մինչև 1.4 մլրդ. ՀՀ դրամ, այսինքն՝ 7.0 մլրդ. ՀՀ դրամ խնայողություն (տե՛ս վերը բերված աղյուսակը):

Պետք է նշել, որ չնայած Տարբերակներ 2-ի և 3-ի դեպքում տարբերությունները (1.6 մլրդ. և 7.0 մլրդ. ՀՀ դրամ) վճարվելու են ոչ-աղքատ տնային տնտեսությունների կողմից<sup>27</sup>՝ առանց ջրամատակարար ընկերությունների վրա ֆինանսական տեսանկյունից որևէ լուրջ ազդեցության, սակայն այդուհետև ոլորտն ընդհանուր առմամբ կլինի շատ ավելի կայուն և կաշխատի բիզնես պայմաններում: Դիտարկված տարբերակների դեպքում կառավարության կողմից ջրամատակարար ընկերություններին ուղղակի վճարվող սուբսիդիաներ չեն լինի. բոլոր եկամուտները կառաջանան փաստացի բաժանորդներից՝ ծառայությունների դիմաց

<sup>27</sup> Սա, իրականում, ներառում է նաև կենտրոնական ջրամատակարարման համակարգին միացած փոքր առևտրային կազմակերպությունների սպառումը:

վճարների ձևով: Սակայն, տնային տնտեսությունների մի մասը ֆինանսական օգնություն կատանա՝ թանկացած սակագների՝ իրենց բեռը չեզոքացնելու նպատակով:

## Ջրի պահանջարկի գնային էլաստիկությունը Տարբերակ 2-ի դեպքում

Ինչպես արդեն նշվել է, Նուժեն և Ուիթինգթոնը հայտնաբերել են, որ զարգացող երկրներում տնային տնտեսությունների ջրապահանջի ֆունկցիաների վերաբերյալ գրականությունը ցույց է տալիս, որ մասնավոր միացումների ջրի սեփական գնային էլաստիկության գնահատականները գտնվում են  $-0.3$  մինչև  $-0.6$  սահմաններում, իսկ եկամուտների էլաստիկությունը՝ սովորաբար  $0.1-0.3$  սահմաններում, ինչը երկու դեպքում էլ մոտ է արդյունաբերական զարգացած երկրների համար սովորաբար ներկայացվող ցուցանիշներին:

Մեր վերլուծությունների դեպքում, Հայաստանի ջրի սպառողների համար գնային էլաստիկությունն ընդունել ենք  $-0.5$ ՝ փաստացի էլաստիկության մասին որևէ վկայության բացակայության պատճառով: Սա մոտ է միջակայքի՝  $0.45$  կենտրոնին, որն այնուհետև կլորացվել է: Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է հնարավոր պահանջարկի մեծությունների հաշվարկներն այն դեպքում, եթե երկու Տարբերակների համար սակագները բարձրացվեն համապատասխանաբար  $16\%$  և  $69\%$ :

Աղյուսակ 9: Ջրի պահանջարկի հաշվարկ՝ ընդգրկելով էլաստիկության գործոնը

	2009	Տարբերակ 1	Տարբերակ 2
Առաջարկվող բարձրացված սակագները, ՀՀ դրամ		180.3	262.5
Սակագնի առաջարկվող բարձրացումը, %		16%	69%
Մատակարարված ջուր, մլն. ԽՄ	92.0	78.5	55.7
Փոփոխությունը նախորդ տարվա համեմատ	-5%	-8%	-35%
Ընդհանուր Վաճառքներ, մլն. ՀՀ դրամ	14,723.1	14159.71	14614.69
Վճարների հավաքագրման մակարդակ, %	94%	97%	97%
Բաժանորդների վճարումներ, մլն. ՀՀ դրամ	13,834.6	13,734.9	14,176.2
Ընդհանուր կապիտալ ծախսեր, մլն. ՀՀ դրամ	10,851.2	6,460.5	441.3

Եթե սակագները բարձրացվեն  $16\%$ ՝ ինչպես առաջարկվում է Տարբերակ 1-ում՝ գործառնական ծախսերի փոխհատուցմանը հասնելու համար, ապա տնային տնտեսությունները կնվազեցնեն իրենց սպառումը՝ բարձրացման տոկոսի կեսի չափով ( $-0.5 \cdot 16\% = -8\%$ ): Սա կհանգեցնի ընդհանուր սպառման՝  $85$  մլն. ԽՄ-ից մինչև  $78.5$  մլն. ԽՄ կրճատվելուն (այլ հավասար պայմաններում): Այսպիսով, ջրի ընդհանուր վաճառքները կկազմեն  $14.2$  մլրդ. ՀՀ դրամ և, եթե ընդունենք հավաքագրման նույն արդյունավետությունը, ապա ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց ընդհանուր վճարների գումարը կկազմի  $13.7$  մլրդ. ՀՀ դրամ: Տարբերակ 1-ում կապիտալ ծախսերը կֆինանսավորվեն կառավարության կողմից:

Տարբերակ 2-ի համար նմանատիպ հաշվարկները տալիս են հետևյալ պատկերը. սակագնի  $69\%$  բարձրացումն սպառողներին կստիպի կրճատել սպառումը նշված տոկոսային մեծության կեսի չափով ( $-0.5 \cdot 69\% = -34.5\%$ ): Սա կհանգեցնի ընդհանուր ջրի սպառման

կրճատմանը մինչև տարեկան 55.7 մլն. ԽՍ մակարդակը, իսկ ընդհանուր վաճառքները կհասնեն 14.6 մլրդ. ՀՀ դրամի: Նույնիսկ եթե ենթադրենք, որ հավաքագրման որևիցե խնդիրներ չեն առաջանա, այսինքն՝ հավաքագրման արդյունավետությունը կմնա նույնպիսի բարձր մակարդակի վրա, ինչպիսին եղել է անցյալում, այն է՝ 97%, ապա ընդհանուր վճարների գումարը կկազմի 14.2 մլրդ. ՀՀ դրամ: Չմոռանալով, որ այս Տարբերակի դեպքում կապիտալ ծախսերն այլևս չեն ֆինանսավորվելու կառավարության կողմից և ընկերությունները ստիպված են լինելու դրանք ֆինանսավորել բաժանորդներից ստացված ընդհանուր վճարներից, տեսնում ենք, որ տարեկան մաշվածության համար բարձրացված սակագներից մնում է ընդամենը մոտ 450 մլն. ՀՀ դրամ: Այսինքն, կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածում եկամուտի հետ կապված առկա խոչընդոտների պայմաններում ակնհայտ է, որ սպառողները կճշգրտեն իրենց սպառումը՝ ծառայությունների դիմաց մոտավորապես նույն գումարը վճարելու համար, այն է՝ 13.7 մլրդ. կամ 14.2 մլրդ. ՀՀ դրամ: Այլ խոսքերով, սակագնի՝ 16% կամ 69% բարձրացման դեպքում, ջրամատակարար ընկերությունների ընդհանուր եկամուտների առումով փոփոխությունը կլինի փոքր (այլ հավասար պայմաններում):

Այս պահին, ինչպես արդեն նշվել է, բացակայում են հստակ տվյալներ, որոնք թույլ կտային որոշել, թե արդյո՞ք այդ գումարը բավարար է, թե ոչ, քանի որ ներդրումների կարիքները հսկայական են, իսկ դրանց կյանքի տևողությունն անորոշ է:

Այդ իսկ պատճառով, վերը բերված հաշվարկները ևս մեկ պատճառ են, թե ինչու Տարբերակ 3-ը չի կարող խորհուրդ տրվել կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածում՝ հաշվի առնելով, որ ընդհանուր եկամուտների մակարդակը և ծառայության բարելավումները բավարար չեն լինի սակագների՝ ծախսերի ամբողջական փոխհատուցման մակարդակին անցնելու համար:

## Խորհուրդ Տրվող Տարբերակ

Վերը կատարված վերլուծությունների վրա հիմնվելով՝ հետագա ներդրման համար խորհուրդ ենք տալիս դիտարկել միայն Տարբերակ 2-ը: Դրա համար կան մի շարք պատճառներ և հիմնավորումներ.

- Վերջին հարցման ընթացքում բացահայտված՝ վճարելու պատրաստակամության մասին վկայությունները. ակնհայտ է, որ բարելավված ջրամատակարարման ծառայությունների դիմաց SS-ները պատրաստ են վճարել հավելյալ 1.5 մլրդ. ՀՀ դրամ: Սա քիչ թե շատ համապատասխանում է կառավարության տարբեր օղակների կողմից ՋԿ ընկերություններին վճարվող ներկայիս սուբսիդիների մակարդակին: Այսինքն, սա ցույց է տալիս, որ SS-ները պատրաստակամ կլինեն վճարել ավելի բարձր սակագներ (եթե ծառայությունները բարելավվեն), որոնք կծածկեն միայն ջրամատակարարման գործառնական ծախսերը: Նրանք, սակայն, ակնկալում են, որ կառավարությունը կվճարի ծառայությունների բարելավման համար՝ ջրամատակարարման ենթակառուցվածքների կապիտալ վերակառուցման և վերանորոգման տեսքով:
- -0.3-0.6 միջակայքում գտնվող պահանջարկի էլաստիկությունը ենթադրում է, որ սպառողները հավանաբար կճշգրտեն իրենց սպառումն այնպես, որ ջրի դիմաց վճարեն մոտավորապես նույն գումարը (կամ վճարումն ավելացնեն շատ փոքր չափով): Սա

գործնականում հանգեցնում է Տարբերակ 2-ի բացառմանը՝ կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածում:

- Մինչև հիմա կապիտալ ծախսերը հիմնականում ֆինանսավորվում էին միջազգային ֆինանսական ինստիտուտների (ՄՖԻ) արտոնյալ վարկերի միջոցով: Ներկայումս նման ֆինանսական միջոցները դեռևս հասանելի են Հայաստանի համար՝ զգալի ծավալներով (առաջարկված կամ ընթացիկ ծրագրեր): Ակնհայտորեն՝ հաշվի առնելով ենթակառուցվածքների ներկայիս մաշված վիճակն, այդ ֆինանսական միջոցներից հրաժարվելը շատ ողջամիտ չէր լինի. դրանք կարող են արդյունավետ կերպով օգտագործվել ենթակառուցվածքների վերակառուցման և ծառայությունների բարելավման նպատակով: Մինևոյն ժամանակ, ՄՖԻ վարկերը հաճախ տրվում են մասնավոր օպերատոր ներգրավելու պայմանով: Սա նույնպես մի շատ դրական երկրորդ պատճառ է՝ ՄՖԻ վարկերը լոկալ ֆինանսավորումով փոխարինելու մասին չմտածելու համար՝ նույնիսկ եթե դա իրագործելի է:
- Մինևոյն ժամանակ, այն խնայողությունները, որոնք ակնկալվում են կառավարության համար՝ ՋԿ ընկերությունների փոխարեն աղքատ ՏՏ-ներին սուբսիդավորելու արդյունքում, կարող են արդյունավետ կերպով օգտագործվել նույն ոլորտում. վերջիվերջո, ՄՖԻ վարկերը չեն կարող ծածկել ենթակառուցվածքների վերակառուցման և վերանորոգման ողջ ծավալը: Կառավարությունը ճկուն չէ 5 ՋԿ ընկերություններից ցանկացածի համար նախատեսված վարկային միջոցներն այլ նպատակներով օգտագործելու հարցում, քանի որ դրանք հատկացված են կոնկրետ ընկերության և նախատեսված են վերակառուցման աշխատանքների որոշակի ծավալի համար: Այսպիսով, ավելի հարուստների սուբսիդավորումը դադարեցնելու պատճառով կատարված խնայողությունները կարող են օգտագործվել ֆինանսական տարվա ընթացքում արտակարգ կամ հրատապ կապիտալ աշխատանքների ֆինանսավորման նպատակով:

## Քաղաքականության Իրականացում

### Քաղաքականության Որոշում

Առաջարկվող քաղաքականության տարբերակն անհրաժեշտ կլինի ընդունել ՀՀ Կառավարության որոշումով, որը կհայտարարի Կառավարության մտադրությունը՝ ՋԿ ընկերությունների սուբսիդավորումը դադարեցնելու և աղքատ տնային տնտեսությունների ուղղակի սուբսիդավորումով այն փոխարինելու վերաբերյալ: Իդեալական տարբերակում, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, որը պատասխանատու է սակագների սահմանման համար, նույնպես պետք է որոշում ընդունի և հանրությանը համապատասխան հայտարարություն անի: Այդ նպատակով, վերջնական որոշում կայացնելուց առաջ անհրաժեշտ են ինտենսիվ քննարկումներ.

a) ՀՀ Ջրային տնտեսության պետական պոմիտեի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև՝ բարձրացված սակագների դիմաց փոխհատուցումն սովորական Ընտանեկան Նպաստին ավելացնելու մանրամասների, ինչպես նաև ջրամատակարարման ծառայությունների փոխհատուցման ծրագրում աղքատ SS-ի ներառման/բացառման համար լրացուցիչ հիմնավորումների համաձայնեցման վերաբերյալ:

b) ՀՀ Կառավարության և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջև<sup>28</sup>՝ սակագնի բարձրացման ամսաթվի համաձայնեցման, ինչպես նաև երկու կողմերի իրականացվելիք քայլերի և միջոցառումների համակարգման նպատակով: ՀՕԿՀ-ը պետք է պարտավորվի բարձրացնել սակագները մինչև ծախսերի ամբողջական փոխհատուցման մակարդակ, որպեսզի առաջարկվող քաղաքականության տարբերակի ներդրումն իրագործելի լինի:

Հիմնվելով ձեռք բերված համաձայնությունների վրա, Կառավարությունը պետք է որոշում ընդունի՝ նշելով իր մտադրությունների և ժամկետների մասին: Ավելի լավ է դա անել նախօրոք, այսինքն՝ տարվա կեսին, և պլանավորել ընկերությունների սուբսիդավորման դադարեցումը սկսած հաջորդ տարվանից: Այս դեպքում, Կառավարությունը կարող է համապատասխան ծրագրային փոփոխություններն արտացոլել հաջորդ տարվա Պետական բյուջեի նախագծում: Միննույն ժամանակ, ՀՕԿՀ-ը նույնպես պետք է հայտարարի հաջորդ տարվանից սկսած սակագները բարձրացնելու՝ իր մտադրությունների մասին:

Ի հավելումն, անհրաժեշտ է խորհրդակցություններ անցկացնել նաև գոյություն ունեցող հանրային-մասնավոր համագործակցության համաձայնագրերի (Վարձակալության և Կառավարման պայմանագրեր) շրջանակներում գործող օպերատորների հետ՝ առաջարկվող քաղաքականության մանրամասների վերաբերյալ նրանց տեղեկացնելու նպատակով, որպեսզի նրանք պատրաստ լինեն սպառողների վարքի փոփոխություններին կամ վստահ լինեն, որ վճարելու պատրաստակամության առումով մեծ խնդիրներ չեն ծագի:

<sup>28</sup> Ըստ ՀՀ օրենսդրության, Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովը (ՀՕԿՀ) անկախ մարմին է:

Համապատասխան որոշումների կայացումից հետո, սուբսիդավորման քաղաքականության փոփոխությունները պետք է հայտարարվեն ՀՀ Ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ՀՀ Կառավարության անունից) և ՀՕԿՀ նախագահի համատեղ մամլո ասուլիսում: Նրանք պետք է հայտարարեն փոփոխությունների առաջին սահմանումները, որպեսզի տնային տնտեսությունները բավարար ժամանակ ունենան դիմելու փոխհատուցման համար, եթե իրավունք ունեն այն ստանալու:

Դրանից հետո լրատվամիջոցների միջոցով պետք է կազմակերպվի հանրային կապերի արշավ՝ ծառայությունների մատուցման իրական արժեքի մասին բնակչության իրազեկման մակարդակը բարձրացնելու, նոր քաղաքականության առավելությունները բացատրելու (օրինակ՝ աղքատներին ուղղված ավելի լավ թիրախավորում, ավելի մեծ արդարություն, եկամուտների աճ ՋԿ ընկերությունների համար՝ առանց ուղղակի սուբսիդիաներից կախվածության), ինչպես նաև փոխհատուցման համար դիմելու ընթացակարգի մասին տեղեկացնելու նպատակով: Սա կօգնի նվազեցնել սակագների անընդունելի լինելու պոտենցիալ ռիսկը, որը ապագայում կարող է հանգեցնել հավաքագրման արդյունավետության հետ կապված խնդիրների:

## Օրենսդրության բարելավումներ

Իրականում, ներկայիս օրենսդրությունը լիարժեք օժանդակում է սակագների միջոցով ջրամատակարարման և ջրահեռացման ծախսերի ամբողջական փոխհատուցման գաղափարին: **ՀՀ Ջրային Օրենսգրքում սահմանված քաղաքականությունը նախատեսում է աստիճանական անցում դեպի ծախսածածկող սակագներ՝** բնակչության եկամուտների ավելացմանը և ջրամատակարարման և կոյուղու ընկերությունների (ՋԿ) գործունեության արդյունքների բարելավմանը զուգահեռ: Այսպիսով, խորհուրդ տրվող տարբերակը (սակագների՝ գործառնական ծախսերի փոխհատուցման մակարդակ) նույնիսկ ավելի մեղմ է, քան Ջրային Օրենսգրքով նախատեսվածը:

## Տվյալների հավաքագրման և մոնիթորինգի բարելավումներ

Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ Ընտանեկան Նպաստի փաթեթում ներառված (և, այդպիսով, ջրամատակարարման ավելացած հաշիվների դիմաց փոխհատուցում ստացող) տնային տնտեսությունների կանոնավոր մոնիթորինգ իրականացնելու ուղղությամբ: Սա անհրաժեշտ է վստահ լինելու համար, որ այդ տնային տնտեսությունները մեկ շնչի հաշվով բավարար ջուր են սպառում՝ առողջական կամ հիգիենիկ լուրջ խնդիրներ չունենալու համար: Սա հնարավոր չէ անել օգտագործելով ՋԿ ընկերությունների տվյալները, քանի որ նրանք չունեն տվյալներ SS անդամների թվի վերաբերյալ: Ավելին, անհրաժեշտ է իրականացնել կանոնավոր հարցումներ՝ ստուգելու համար, թե արդյո՞ք ոչ աղքատ SS-ներում (տնային տնտեսություններ, որոնք ներկայումս ընդգրկված չեն Ընտանեկան Նպաստի ծրագրում) խնդիրներ ծագում են, թե ոչ: Այս հարցումները կարելի է ներառել ԱՎԾ-ի կողմից ամեն տարի իրականացվող՝ Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված

հետազոտության մեջ կամ կարող են հանձնարարվել այլ կազմակերպությունների: Երկու դեպքում էլ ԱՄՏ-ն պատրաստ է տրամադրել մեր հարցումներում կիրառված մեթոդաբանությունը և, անհրաժեշտության դեպքում, աջակցել կանոնավոր հարցումների մեթոդաբանությունների մշակմանը:

## Ռիսկերի Կառավարում

Ինչպես նշվել է վերը, 2-5 Քվինտիլների մասով մատչելիության հետ կապված ոչ մի զգալի ռիսկ չի ակնկալվում: Միննույն ժամանակ, ամենաաղքատ քվինտիլում ակնկալվող մատչելիության ռիսկին արձագանքը կլինի ուղղակի: Սակայն, գոյություն ունի ռիսկ կապված սակագների բարձրացման հանդեպ սպառողների ընդհանուր դժկամության հետ, քանի որ ջուրը հաճախ ընկալվում է որպես համարյա “հանրային բարիք”: Այս ռիսկի դեմ պայքարելու համար անհրաժեշտ կլինի կազմակերպել հանրային իրազեկման արշավ, որում ներգրավված կլինեն համապատասխան պետական մարմինները և պաշտոնյաները, որոնք կբացատրեն մանրամասները և ներկայիս մոդելը, որում հարուստները ստանում են սուբսիդիաների մեծ մասը, ինչպես նաև կմատնանշեն նոր քաղաքականության կարևորությունը, կնկարագրեն օգուտները և նոր սակագնի և փոխհատուցման համակարգի դեպքում արդարության աստիճանի աճը: Նման հանրային իրազեկման արշավների մանրամասները կարող են լրացուցիչ կատարելագործվել շահագրգիռ կողմերի մոդելավորման միջոցով, որը ներկայացված է Հավելված 4. Շահագրգիռ կողմերի սխեմա՝ առաջարկվող քաղաքականության տարբերակի համար:

## Ֆինանսական ծրագիր

Զուտ ծախսերի առումով, առաջարկվող քաղաքականության համար ֆինանսական հատկացում չի պահանջվում: Հակառակը, այն Կառավարությանը կբերի խնայողություններ՝ նախկինում ՋԿ ընկերություններին վճարվող տարեկան սուբսիդիաների և սակագնի բարձրացման ազդեցությունը չեզոքացնելու նպատակով աղքատներին վճարվող փոխհատուցման տարբերության չափով (1.9 մլրդ. ՀՀ դրամ - 331 մլն. ՀՀ դրամ = մոտ. 1.6 մլրդ. ՀՀ դրամ): Սակայն, կպահանջվի նոր բյուջետային ծրագրի ներդրում (կամ գոյություն ունեցող “Ընտանեկան Նպաստի Ծրագրի” աճ) և մենք պատրաստել ենք ՄԺԾԾ-ի նոր նախաձեռնության հայտ (ՀՀ Ֆինանսների նախարարության մեթոդաբանական ուղեցույցին համապատասխան)՝ այս գործընթացին օժանդակելու նպատակով (տե՛ս Հավելված 3. ՀՀ Ֆինանսների նախարարությանը ներկայացվող՝ նոր նախաձեռնությունների ՄԺԾԾ ձևի նախագիծ):

## Մոդելի լրամշակումը

Մենք առաջարկում ենք, որ մինչև քաղաքականության իրականացումը, համապատասխան պետական գործակալությունը դիտարկի տարբերակներ՝ մի շարք ասպեկտներում մոդելի

կատարելագործման համար, եթե համապատասխան տվյալները մինչ այդ հասանելի լինեն: Բարելավման հատուկ ուղղությունները կարող են լինել հետևյալը.

- Սպառման էլաստիկության օգտագործում՝ Use of ջրի ընդհանուր սպառման կոպիտ գնահատականի փոխարեն (նախորդ գլուխներում արդեն իսկ տրամադրված է սպառման էլաստիկության բազային վերլուծություն՝ միջազգային փորձի կիրառմամբ): Այնուամենայնիվ, էլաստիկությունը կարող է ազդել սակագների բարձրացման անհրաժեշտ մասշտաբների վրա, սակայն ամեն դեպքում մոդելն ինքնին կարելի է օգտագործել: Մեր քաղաքականության մոդելավորումը հաշվի է առնում էլաստիկության որոշ մակարդակ՝ հիմնված անցյալում Հայաստանի սպառողների վարքի վրա, սակայն այդ հաշվարկները հիմնված են տարբեր գործոնների փաթեթի վրա, որոնք սպառման վարքի վրա ազդել են համակցված ձևով (համակարգային փոփոխություններ, ջրաչափերի տեղադրում և այլն): ԱՄՏ-ն չի կարող հաշվարկել հենց Հայաստանին բնորոշ մաքուր գնային էլաստիկությունը՝ պատշաճ էմպիրիկ տվյալների պակասի պատճառով, և փոխարենն օգտագործել է այս թեմայի շուրջ առկա միջազգային փորձը: ԱՄՏ-ն շարունակելու է ջանքեր ներդնել՝ երկրին բնորոշ էլաստիկության գործակցի հաշվարկի համար լուծումներ գտնելու ուղղությամբ:
- Փոխհատուցման մանրամասներ. ներկայումս ընտանեկան նպաստների 61%-ը տրվում է Քվինտիլ 1-ին, իսկ 39%-ը՝ Քվինտիլ 2-ին: Կառավարությունը կարող է ընտրել միայն Քվինտիլ 1-ի ՏՏ-ների սուբսիդավորումը՝ փոխհատուցման ենթակա առանձին տնային տնտեսությունների “համապատասխանության” գնահատականի որևէ շեմ սահմանելու միջոցով: Որպես այլընտրանք, Կառավարությունը կարող է ընտրել Քվինտիլ 2-ի ՏՏ-ներին՝ սակագնի բարձրացման ազդեցության մասնակի փոխհատուցում (օրինակ՝ Քվինտիլ 2-ի ՏՏ-ների համար որոշակի ֆիքսված սպառման ծավալների փոխհատուցման միջոցով): Վերջապես, Կառավարությունը կարող է ընդունել ԱՄՏ-ի կողմից առաջարկված հայեցակարգը և որոշել փոխհատուցումը չկապել որևէ այլ գոյություն ունեցող համակարգի հետ, փոխարենը կիրառելով աղքատ ընտանիքների փոխհատուցման անկախ համակարգ՝ աղքատության մակարդակի որոշման առանձին համակարգով (ավուլի շատ հիմնված միայն ջրի սպառման, քան թե՛ ընդհանուր աղքատության վրա): Կարող են լինել նաև բազմաթիվ այլ ենթա-տարբերակներ, որոնք կարելի է մշակել այն դեպքում, եթե կայացվի փոխհատուցման համակարգի և դրա՝ գոյություն ունեցող ընտանեկան նպաստի համակարգի հետ հնարավոր կապի մասին հիմնական որոշումը:
- Ավելի կոնկրետ ներդրումային ծրագիր՝ ֆինանսավորման կարիքները որոշելու համար (եթե իրականացման համար մասնակիորեն ընտրվի Տարբերակ 3-ը): Մեր մոդելը գոյություն ունեցող քաղաքականության խնդրի լուծումը դիտարկում է “ֆինանսների նախարարի տեսանկյունից”: Այդ իսկ պատճառով լուծումը հիմնված է բյուջատային հատկացումների օպտիմիզացման վրա (ներառյալ կապիտալ ֆինանսավորման ասպեկտները, որոնք նման են ներկայիս կապիտալ ծախսերի մակարդակները որպես էկզոգեն գործոններ օգտագործելու մոդելին): Կապիտալ ծախսերի վերաբերյալ “ջրի ոլորտի մասնագետի տեսանկյունից” կարող է դիտարկվել “կարիքների վրա հիմնված” մոդել: Քաղաքականության վերաբերյալ որոշում



կայացնողները պետք է կատարեն մոդելի ընտրությունը: Ամեն դեպքում, “ամբողջ համակարգի սուբսիդավորման” գոյություն ունեցող համակարգը՝ “աղքատ ընտանիքների սուբսիդավորման” ավելի համարժեք համակարգով փոխարինելու ընդհանուր հայեցակարգը երկու մոդելների դեպքում էլ նույնն է:

Մրանք կատարելագործումների տեսակներ են, որոնք կարող է իրականացնել քաղաքականության վերաբերյալ որոշում կայացնողը՝ այն դեպքում, եթե այս քաղաքականության մոդելավորման ընդհանուր հայեցակարգն ընդունվի Կառավարության կողմից: Մակայն, քաղաքականության սիմուլյացիայի մոդելների մանրամասները կախված են սույն հաշվետվությունով առաջարկված հայեցակարգին անցնելու վերաբերյալ սկզբնական որոշումից: Այսպիսով, սույն հաշվետվության առաջնային նպատակն ավելի շուտ վերը նշվածի մասին տեղեկացնելն ու որոշման կայացմանը նպաստելն է, քան թե՝ մոդելի հատուկ մանրամասները, որոնք կարող են ընտրվել ավելի ճկուն ոճով:

## Հետագա Քայլերը

Ստորև ներկայացված Գանտի աղյուսակում ամփոփված են այն քայլերը, որոնք անհրաժեշտ են տարբեր նախարարությունների և մարմինների կողմից, որպեսզի ապահովվի նոր սակագների՝ 2013թ. ապրիլից ուժի մեջ մտնելը և Ընտանեկան Նպաստի համակարգի միջոցով աղքատ տնային տնտեսություններին համապատասխան փոխհատուցումների վճարումը:

Աղյուսակ 10.Առաջարկվող գործողությունների ժամանակացույց

Քայլեր	Դեկ-11	Հունվ-12	Փետ-12	Մարտ-12	Ապր-12	Մայ-12	Հուն-12	Հուլ-12	Օգոս-12	Սեպ-12
Քայլ 1: ԱՄՏ-ի կողմից ներկայացված ՔՄ հաշվետվության ներքին քննարկում նախարարությունում՝ որոշում կայացնելու համար										
Քայլ 2: Քննարկում համապատասխան այլ նախարարությունների և գործակալությունների հետ (Ֆինանսների նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀԾԿՀ և այլ)										
Քայլ 3: Քաղաքականության փաստաթղթի ներկայացում Կառավարությանը										
Քայլ 4. Կառավարության կողմից քննարկում, ներկայացում կառավարության նիստին և հաստատում										
Քայլ 5: Կառավարության կողմից հաստատված քաղաքականության առաջարկի արտացոլում 2013թ. Բյուջեի հայտի նախագծում (ՁՏՊԿ-ի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացում Ֆինանսների նախարարություն)										
Քայլ 6: Հանրային լուսաբանման միջոցառումներ, համապատասխան պաշտոնյաների մամլո ասուլիսներ										
Քայլ 7: Նոր սակագնի ուժի մեջ մտնելու ամսաթիվ և Ընտանեկան նպաստների շրջանակներում ամսական փոխհատուցումների վճարում	Ապր-13									

## Ազդեցության Գնահատում

Ինչպես վերը նկարագրվել է, ընդհանուր արժեքը կարելի է բաժանել ծրագրի շահառուների թվի վրա՝ մի շահառուի հաշվով կառավարության ծախսը որոշելու համար: ԾԱ գործակիցները կամ մեկ շահառուի հաշվով ծախսը ներկայացված են և՛ տարեկան և՛ ամսական կտրվածքով:

Աղյուսակ 11: Ջրի ոլորտի քաղաքականության այլընտրանքների ԾԱՎ գործակիցները

	Տարբերակ 1 (Մտատու քվո)	Տարբերակ 2 (Գործառնական ծախսերի փոխհատուցում)	Տարբերակ 3 (Բոլոր ծախսերի փոխհատուցում)
Ընդհանուր ծախսը (գործառնական սուբսիդիա + կապիտալ ծախսեր), մլն. ՀՀ դրամ	8,427.5	6,791.8	1,419.6
Աղքատ SS-ների թիվը	117,779	117,779	117,779
Ընդհանուր ծախսը 1 աղքատ SS-ի հաշվով, ՀՀ դրամ տարեկան	71,553.4	57,665.7	12,053.1
Ընդհանուր ծախսը 1 աղքատ SS-ի հաշվով, ՀՀ դրամ ամսական	5,962.8	4,805.5	1,004.4
Համեմատած Մտատու քվոյի հետ, % փոփոխություն		-19%	-83%

Գործակիցները ցույց են տալիս, որ ներկայումս Կառավարությունն ամսական ծախսում է 5.9 հազ. ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր պոտենցիալ շահառու հանդիսացող տնային տնտեսության համար: Սակայն, եթե սակագները բարձրացվեին 16%-ով՝ ամբողջական գործառնական ծախսերի փոխհատուցում ապահովելու նպատակով (կապիտալ ծախսերը շարունակվում են վճարվել Կառավարության կողմից), ապա Կառավարությունը ստիպված կլիներ յուրաքանչյուր աղքատ տնային տնտեսությանը վճարել 4.8 հազ. ՀՀ դրամ՝ բարձրացված սակագինը փոխհատուցելու համար: Նշված 4.8 հազ. ՀՀ դրամն իրենից ներկայացնում է ՋԿ ընկերություններին տրվող կապիտալ սուբսիդիաների և սակագնի բարձրացման ազդեցությունը չեզոքացնելու նպատակով մեկ աղքատ տնային տնտեսությանը տրվող ուղղակի փոխհատուցման (234.4 ՀՀ դրամ<sup>29</sup>) գումարը: Մնացած ոչ աղքատ տնային տնտեսությունները ջրամատակարարման ծառայությունների համար պետք է վճարեն համապատասխանաբար 16% ավել (ընդունելով, որ սակագնի բարձրացման արդյունքում նրանք չեն փոխի սպառման վարքագիծը): Այնուամենայնիվ, Տարբերակ 2-ը կապիտալ ծախսերի ֆինանսավորման բեռը թողնում է կառավարության վրա (տարեկան մոտ 6.4 մլրդ. դրամ)՝ ծառայությունների բարելավմանը հասնելու նպատակով, միաժամանակ կրճատելով ընդհանուր տարեկան բեռը մոտ 20%-ով (տե՛ս վերևի աղյուսակը):

<sup>29</sup> 331.3 մլն. ՀՀ դրամ / 117 779 շահառու SS-ներ / 12 ամիս = 234.4 ՀՀ դրամ ամսական

Վերջին հարցումը ցույց տվեց, որ տնային տնտեսությունները պատրաստակամ են լրացուցիչ վճարել ամսական միջինում մոտ 179 ՀՀ դրամ՝ ջրամատակարարման բարելավված ծառայությունների դիմաց: Հատկանշական է, որ ամենաաղքատ քվինտիլի SS-ները պատրաստ են լրացուցիչ վճարել շատ ավելի մեծ գումար (295 ՀՀ դրամ), մինչդեռ ամենահարուստները՝ ընդամենը 144 ՀՀ դրամ: Եթե էքստրապոլացնենք այն ամսական միջին գումարը, որը տնային տնտեսությունները պատրաստ են վճարել բարելավված ծառայությունների համար, իսկ այնուհետև հաշվի առնենք 5 ՋԿ ընկերությունների կողմից սպասարկվող միացումների/տնային տնտեսությունների թիվը (720,000), ապա արդյունքում կարելի է ստանալ 1.5 մլրդ. ՀՀ դրամ լրացուցիչ տարեկան ֆինանսական ներհոսքեր դեպի ՋԿ ընկերություններ (720,000 տնային տնտեսություններ \* 179 ՀՀ դրամ \* 12 ամիս = 1,544 մլն. ՀՀ դրամ):

Սա, մի կողմից, ցույց է տալիս ավել վճարելու՝ սպառողների պատրաստակամությունը և, մյուս կողմից, օժանդակում է այն գաղափարին, որ, ընդհանուր առմամբ, մատչելիության խնդիրներ չեն ծագի: Սակայն, չնայած Քվինտիլ 1-ի SS-ների՝ ներկայիս վճարումների համեմատ հավելյալ 300 ՀՀ դրամ վճարելու պատրաստակամությանը, նրանք պետք է վճարեն իրենց ընդհանուր ծախսերի համարյա 2%-ը: Հաշվի առնելով հարցի առողջական, սանիտարական և սոցիալական ասպեկտները, կարելի է եզրակացնել, որ ավելի աղքատ տնային տնտեսություններն աջակցության կարիք կունենան՝ մատչելիության հետ կապված խնդիրներից խուսափելու համար:

Այս կերպ, ոլորտի ընդհանուր կայունությունը կհասնի շատ ավելի բարձր մակարդակի՝ համեմատած ներկայիս իրավիճակի հետ: Ներկայիս վիճակի հետ կապված խնդիրները՝ ինչպես երևում է վերը, առնչվում են կապիտալ ծախսերի ֆինանսավորմանը, մինչդեռ գործառնական ծախսերը լուրջ խնդիր չեն առաջացնի: Մասնավորապես, խնդիրներն ակներև կդառնան, երբ դոնորների միջոցներն այլևս հասանելի չլինեն՝ գոյություն ունեցող ենթակառուցվածքների վերանորոգման համար անհրաժեշտ կապիտալ ներդրումների ֆինանսավորման համար: Մինչդեռ, եթե ոլորտը աստիճանական անցում կատարի դեպի մի համակարգ, որտեղ ծառայությունների դիմաց ամբողջությամբ վճարում են ծառայություններ ստացողները, ապա այն կդառնա ավելի քիչ խոցելի՝ էկզոգեն որոշումների առջև:

Դա կտրուկ կփոխի օգուտների բաշխման պատկերը (կապված սուբսիդավորման ծրագրերի հետ): Օգուտներն ամբողջությամբ կուղղվեն Քվինտիլ 1-ին որպես Ընտանեկան նպաստի մի մաս՝ կառավարության քաղաքականության թիրախը տեղաշարժելով դեպի աղքատները՝ բոլոր 5 քվինտիլների միջև համարյա հավասարապես բաշխվելու փոխարեն: Միևնույն ժամանակ, կապիտալ վերակառուցման ծախսերի տեսանկյունից, օգուտների բաշխումը կմնա 2008թ. նման, այսինքն՝ բոլոր 5 քվինտիլների միջև համարյա հավասարաչափ: Ստորև ներկայացված Աղյուսակը ցույց է տալիս տարբեր տեսակի բյուջետային ծախսերի օգուտների բաշխումը, ինչպես նաև առաջարկվող քաղաքականության տարբերակի իրականացումից հետո քվինտիլների միջև օգուտների ակնկալվող բաշխման հաշվարկը:

Աղյուսակ 12: Առաջարկվող քաղաքականության ազդեցության հաշվարկն ըստ Քվինտիլների

Տարբեր տեսակի բյուջետային ծախսերի օգուտների բաշխումը	Ծախսային քվինտիլ					Միջին	Ընդհանուր
	1 (ամենացածր)	2	3	4	5 (ամենաբարձր)		
Օգուտների բաշխումը՝ կախված մեկ շնչի հաշվով սպառման ծավալներից, 2010թ.	10.6%	14.2%	17.5%	20.9%	36.8%	20.0%	
Կապիտալ ծախսերին ուղղվող սուբսիդիաների բաշխումն ըստ քվինտիլների (համաձայն 2010թ. բաշխման մասնաբաժինների), մլն. ՀՀ դրամ	684.4	914.8	1,132.6	1,350.1	2,378.7	1,292.1	6,460.5
Աղքատ SS-ներին տրվող ուղղակի փոխհատուցման բաշխումն ըստ քվինտիլների, մլն. ՀՀ դրամ	331.3						331.3
Ընդհանուր սուբսիդիաներն ըստ քվինտիլների, մլն. ՀՀ դրամ	1,015.7	914.8	1,132.6	1,350.1	2,378.7	1,358.4	6,791.8
Բաշխում ըստ քվինտիլների, ընդհանուր սուբսիդիաներ և փոխհատուցումներ՝ առաջարկվող քաղաքականության տարբերակի շրջանակներում	15.0%	13.5%	16.7%	19.9%	35.0%	20.0%	

Մա հաշվարկվել է առաջարկվող քաղաքականության տարբերակի համար, այն է՝ միայն շահագործման և պահպանման սուբսիդիաների փոխարինում աղքատ տնային տնտեսություններին վճարվող ուղղակի սուբսիդիաներով/փոխհատուցումով: Հնարավոր ազդեցությունը գնահատելու համար կատարված հիմնական ենթադրությունն այն է, որ բոլոր (ընթացիկ) սուբսիդիաները կուղղվեն Քվինտիլ 1-ին: Մինչև ժամանակ, բոլոր քվինտիլները կշարունակեն օգուտ ստանալ կապիտալ ծախսերի սուբսիդիաներից՝ այն նույն համամասնություններով, որոնցով ստացել են 2010թ.:

**Հավելված 1. Վիճակագրական և ֆինանսական տվյալներ**

Աղյուսակ 13. Հիմքում ընկած տվյալները և մոդելային տարվա կառուցումը

	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	Մոդելային տարի
Մատակարարված ջուր, մլն. ԽՄ	114.9	96.3	91.7	96.6	92.0	78.5
Ընդհանուր վաճառքներ, մլն. ՀՀ դրամ	12691.1	12792.5	13571.1	14179.8	14,723.1	12,568.4
Վճարումներ բաժանորդներից, մլն. ՀՀ դրամ	8993.8	10295	11719.4	12588.1	13,834.6	12,191.3
Վճարների հավաքագրման մակարդակ, %	71%	80%	86%	89%	94%	97%
ԶԿ ընկերություններին տրվող ընթացիկ սուբսիդիաներ, մլն. ՀՀ դրամ	2,568.8	1,633.6	1,381.3	1,287.0	901.8	1,967.0
Ընդամենը ընթացիկ	11,562.6	11,928.6	13,100.7	13,875.1	14,736.4	14,158.3
1 ԽՄ համար գործող սակագինը, միջին, առանց սուբսիդիաների, ՀՀ դրամ/ԽՄ	78.3	107.0	127.9	130.3	150.4	155.2
1 ԽՄ համար գործող սակագինը, միջին, ներառյալ սուբսիդիաները, ՀՀ դրամ/ԽՄ	100.7	123.9	142.9	143.6	160.2	180.3
Սակագնի բարձրացում՝ գործառնական ծախսերի փոխհատուցման մակարդակին հասնելու համար, %	29%	16%	12%	10%	7%	16%
Ընդհանուր կապիտալ ծախսեր, մլն. ՀՀ դրամ, այդ թվում.	7,297.8	4,075.9	4,722.9	5,354.6	10,851.2	6,460.5
<i>Դռնորների կողմից ֆինանսավորվող</i>	<i>7,297.8</i>	<i>3,977.9</i>	<i>4,614.6</i>	<i>5,295.2</i>	<i>10,468.8</i>	<i>6,330.8</i>
Բոլոր ծախսերի փոխհատուցման մակարդակի ենթադրյալ սակագին, ՀՀ դրամ/ԽՄ	164.2	166.3	194.4	199.1	278.1	262.5
Սակագնի բարձրացում՝ ծախսերի փոխհատուցման մակարդակին հասնելու համար, %	110%	55%	52%	53%	85%	69%

Աղյուսակ 14: Քաղաքականության տարբերակի արժեքի հաշվարկ

Ընտանեկան Նպաստի ծրագրի շահառու SS-ների թիվը	117,779
Ընտանիքի միջին չափը	3.9
Աղքատների համար սակագնի բարձրացման ազդեցությունը չեզոքացնելու սուբսիդիաների ընդհանուր գումարը (Կառավարության ընդհանուր ծախսը), մլն. ՀՀ դրամ	331.3

## Հավելված 2. Տարբերակներ 1-3-ի համեմատություն

Աղյուսակ 15. Քաղաքականության տարբերակների վերաբերյալ համեմատական աղյուսակ՝ Պետական բյուջեի տեսանկյունից

<i>(Բացարձակ արժեքներ)</i>	Տարբերակ 1 (Ստատուս քվո)	Տարբերակ 2 (Գործառնական ծախսերի փոխհատուցում)	Տարբերակ 3 (Բոլոր ծախսերի փոխհատուցում)
Սակագնի մակարդակի բարձրացում, %	անփոփոխ	16%	69%
Ջրամատակարար ընկերությունների սուբսիդիաներ, մլն. ՀՀ դրամ	1,967.0	0	0
Աղքատների նպաստներ (փոխհատուցում), մլն. ՀՀ դրամ		331.3	1,419.6
Կառավարության կողմից ֆինանսավորվող կապիտալ ծախսեր (2005-09թթ. միջինը), մլն. ՀՀ դրամ	6,460	6,460	0
ԸՆԴԱՄԵՆԸ ծախսեր Պետական բյուջեից, մլն. ՀՀ դրամ	8,427.5	6,791.8	1,419.6

Աղյուսակ 16. Քաղաքականության տարբերակների վերաբերյալ համեմատական աղյուսակ՝ ընտանեկան բյուջեի տեսանկյունից

<i>(ՕՍՎ գործակիցներ)</i>	Տարբերակ 1 (Ստատուս քվո)	Տարբերակ 2 (Գործառնական ծախսերի փոխհատուցում)	Տարբերակ 3 (Բոլոր ծախսերի փոխհատուցում)
Ընդհանուր սուբսիդիաներ, մլն. ՀՀ դրամ	8,427.5	6,791.8	1,419.6
Աղքատ SS-ների թիվը	117,779	117,779	117,779
Ընդհանուր սուբսիդիաները 1 աղքատ SS-ի հաշվով, ՀՀ դրամ տարեկան	71,553.4	57,665.7	12,053.1
Ընդհանուր սուբսիդիաները 1 աղքատ SS-ի հաշվով, ՀՀ դրամ ամսական	5,962.8	4,805.5	1,004.4
Համեմատած Ստատուս քվոյի հետ, % փոփոխություն		-19%	-83%

Աղյուսակ 17. Ազդեցությունն աղքատ SS-ների վրա

Ազդեցությունն աղքատ SS-ների վրա	Տարբերակ 2	Տարբերակ 3
Միջին սպառումը, լ/օր	80	80
SS ամսական միջին սպառումը, ԽՄ	9.36	9.36
Ամսական միջին հաշիվը, ՀՀ դրամ (ներկա սակագներ)	1,453.0	1,453.0
Ամսական միջին հաշիվը, ՀՀ դրամ (սակագների բարձրացում՝ ինչպես նկարագրվել է վերը յուրաքանչյուր Տարբերակի համար)	1,687.4	2,457.4
Ամսական հաշիվների աճ, ՀՀ դրամ (համեմատած ներկա սակագների հետ, սպառումն անփոփոխ)	234.4	1,004.4



### Հավելված 3. ՀՀ Ֆինանսների նախարարությանը ներկայացվող՝ նոր նախաձեռնությունների ՄԺԾԾ ձևի նախագիծ

#### ՆՈՐ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԱԶԱՓ

##### Պետական բյուջետային գործակալություն

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

##### Առաջարկի/նախաձեռնության նկարագրություն

Նախաձեռնության նպատակն է ներկայումս իրականացվող՝ ջրամատակարար ընկերությունների սուբսիդավորման (սակագները ցածր մակարդակի վրա պահելու համար) պրակտիկայի փոխարինումն Ընտանեկան Նպաստի ծրագրում ընդգրկված շահառուների փոխհատուցումով այնպես, որ ջրամատակարարման սակագնի բարձրացումը նրանց վրա ազդեցություն չունենա:

##### Գերակայություն

Որպես աղքատների պաշտպանությանն ուղղված ընդհանուր սոցիալական քաղաքականության մաս՝ Ընտանեկան Նպաստների ծրագիրն ամբողջությամբ կամ մասնակի, դրա ընդլայնումը կամ աճը համարվում են բարձր գերակայություն ունեցող: Այդ իսկ պատճառով, սույն նախաձեռնությունը կարելի է դասակարգել որպես բարձր գերակայություն ունեցող և տալ 1-ին համարը:

##### Նոր նախաձեռնությունների ազդեցությունը ծախսերի վրա

(մլն. ՀՀ դրամ)

	2013թ.	2014թ.	2015թ.
Հավելյալ ընթացիկ ծախսեր	331	331	331
Հավելյալ ընթացիկ ծախսեր	0	0	0
(Խնայողություններ/հավելյալ եկամուտներ)	(1,967)	(1,967)	(1,967)
<b>Զուտ ազդեցությունը</b>	<b>1,636</b>	<b>1,636</b>	<b>1,636</b>

##### Առավելություններ

Առաջարկվող նախաձեռնության առավելությունները հետևյալն են. (i) բյուջետային ծախսերի ավելի լավ թիրախավորում դեպի աղքատ տնային տնտեսությունները (ի տարբերություն բոլոր քվինտիլների սուբսիդավորմանը) և (ii) խնայողությունների Կառավարության համար՝ տարեկան ավելի քան 1.5 մլրդ. ՀՀ դրամ գումարով:

##### Արժեքի մասին տվյալներ և գերակայությունների բաշխում

Հաստատման դեպքում, Ընտանեկան նպաստի ծրագրին յուրաքանչյուր տարի կհատկացվի հավելյալ 331 մլն. ՀՀ դրամ՝ Ընտանեկան նպաստի ծրագրում ընդգրկված 117 799 տնային տնտեսությունների վրա ջրամատակարարման բարձրացված սակագների ազդեցությունը փոխհատուցելու նպատակով: Դա կկազմի մեկ տնային տնտեսության հաշվով ամսական միջինում 234 ՀՀ դրամ կամ մոտավորապես 2800 ՀՀ դրամ տարեկան՝ մեկ տնային տնտեսության հաշվով:

## Քննարկումներ

Քննարկումների մանրամասների համար տե՛ս [www.ast.am](http://www.ast.am):


### Աղյուսակ. Նոր նախաձեռնությունների ֆինանսավորման այլ աղբյուրներ

(մլն. ՀՀ դրամ)

		2013թ.	2014թ.	2015թ.
1	Նոր նախաձեռնությունների կամ գոյություն ունեցող ծրագրերի ընդլայնման ընդհանուր արժեքը	331	331	331
2	Նոր նախաձեռնությունների ֆինանսավորման այլ աղբյուրներ (2.1 + 2.2)	1,967	1,967	1,967
2.1	Այլ աղբյուրներից ֆինանսավորում	0	0	0
2.2	Ծախսերի խնայողություններ այլ ծրագրերից	1,967	1,967	1,967
3	Նոր նախաձեռնությունների (ընդլայնում կամ գոյություն ունեցող) գուտ ազդեցությունը ընդհանուր բյուջեի վրա (ընդհանուր արժեքը՝ հանած այլ աղբյուրներից ֆինանսավորումը և խնայողությունները), (1 – 2)	1,636	1,636	1,636

## Հավելված 4. Շահագրգիռ կողմերի սխեմա՝ առաջարկվող քաղաքականության տարբերակի համար

Ստորև բերված գծապատկերը ներկայացնում է առաջարկվող քաղաքականության նախաձեռնության հիմնական շահագրգիռ կողմերին՝ ըստ խնդրում նրանց հետաքրքրվածության աստիճանի և դասավորված ըստ նրանց հարաբերական համաձայնության: Այս սխեման օգնում է սահմանել առաջարկվող քաղաքականությունն առաջխաղացելու գործում պոտենցիալ ազդեցիկ դերակատարներին և ավելի լավ մշակել իրազեկման արշավները:



Շահագրգիռ կողմերի նախնական վերլուծությունը հուշում է, որ ՉՏՊԿ-ն և ջրամատակարար ընկերությունները (օպերատորները) պետք է ամենաշատը հետաքրքրված և համաձայն լինեն լինեն սակագների՝ մինչև գործառնական ծախսերի փոխհատուցման մակարդակ բարձրացման հարցում: Այսպիսով, նրանք ամենահեշտը կներգրավվեն, մինչդեռ չի ակնկալվում, որ քաղաքական գործիչները հակված կլինեն սակագնի բարձրացմանը, քանի որ դա սպառողների/քվեարկողների աչքերում ողջունելի քայլ չէ: Այս ամենը նախնական պատկերացում է տալիս առ այն, թե ինչպես է պետք մշակել իրազեկման արշավները կամ ինչպես մոտենալ տարբեր շահագրգիռ կողմերին՝ քաղաքականության փոփոխության իրականացմանն օժանդակելու նպատակով:

## Հավելված 5. Արդյունավետության չափման միջոցը և ազդեցությունը օգուտների բաշխման վրա

Օգուտների բաշխումը հաշվարկվել է ելնելով 2008 և 2010թթ. հարցումների տվյալներից և արտացոլում է ոչ միայն պարզապես միացումը համակարգին, այլ ավելի շուտ ջրամատակարարման փաստացի օգտագործումը կամ սպառումն ըստ քվինտիլների:

Աղյուսակ 18. Արդյունավետության չափման միջոց. Ակնկալվող օգուտների բաշխումն ըստ քվինտիլների՝ առաջարկվող քաղաքականության իրականացման դեպքում

Օգուտների բաշխում	Ծախսային քվինտիլ				
	1 (ամենացածր)	2	3	4	5 (ամենաբարձր)
Խմելու ջրի մատակարարման ոլորտում օգուտների բաշխում (միացումներ մատակարարման համակարգին), 2008թ.	19%	19.8%	19.9%	20.5%	20.8%
Օգուտների բաշխումը՝ կախված մեկ շնչի հաշվով սպառման ծավալներից, 2008թ.	9.6%	13.2%	17.0%	23.6%	36.6%
Օգուտների բաշխումը՝ կախված մեկ շնչի հաշվով սպառման ծավալներից, 2010թ.	10.6%	14.2%	17.5%	20.9%	36.8%
Ակնկալվող բաշխումն ըստ քվինտիլների, ընդհանուր սուբսիդիաներ և փոխհատուցումներ՝ առաջարկվող քաղաքականության տարբերակի շրջանակներում	15.0%	13.5%	16.7%	19.9%	35.0%

Կարելի է տեսնել, որ չնայած բոլոր 5 քվինտիլներում համակարգին մատչման հարաբերականորեն համամասնական բաշխմանը, ամենաաղքատ SS-ները շատ ավելի քիչ օգուտ են ստանում ջրամատակարարման ոլորտում կառավարության ծախսային ծրագրերից, քան իրենց 20% մասնաբաժինն է: Այնուամենայնիվ, 2008 և 2010թթ. միջև գրանցվել է նշված բաշխման թեթև բարելավում, որը սակայն տեղի է ունեցել միայն Քվինտիլ 4-ի հաշվին: Սա կարելի է բացատրել այդ քվինտիլի սպառողական վարքի ճշգրտումով՝ բարձրացած սակագների արդյունքում: Մինչդեռ Քվինտիլ 5-ում օգուտների բաշխումը նույնիսկ մի փոքր՝ 0.2 տոկոսային կետով, ավելացել է:

Առաջարկվող քաղաքականության տարբերակի իրականացումից հետո, այսինքն՝ ամենաաղքատ SS-ներին (որոնք ենթադրվում է, որ ընդգրկված են Քվինտիլ 1-ում) ուղղակի փոխհատուցումների համակարգի ներդրումից հետո, ըստ քվինտիլների օգուտների բաշխումը որոշակի չափով կբարելավվի: Տնային տնտեսությունների ամենաաղքատ 20%-ը կստանա ընդհանուր օգուտների 15%-ը (բարելավում 10.6% մակարդակից), մինչդեռ ամենահարուստ 20%-ը կստանա 35% (նվազում 36.8% մակարդակից): Բարելավումը կլինի միայն մասնակի, քանի որ կապիտալ ծախսերը կշարունակվեն ֆինանսավորվել Կառավարության կողմից և բոլոր Քվինտիլները դրանից կօգտվեն համարյա հավասարապես՝ համակարգին մատչման բավականին հավասարաչափ բաշխման պատճառով: Այսպիսով, բարելավումը տեղի կունենա միայն այսպես կոչված գործառնական սուբսիդիաների ճշգրտման պատճառով, որը՝ առաջարկվող քաղաքականության տարբերակի շրջանակներում, կուղղվի միայն ամենաաղքատ Քվինտիլին (տե՛ս նաև Աղյուսակ 11):

## Հղումներ

1. Ստրաուբ, Ս. 2009թ. - Կառավարումը Ջրամատակարարման Ոլորտում: Թեմատիկ աշխատություն Գլոբալ Ջարգացման Ցանցի “Կառավարման Տեսակները. Արդյունավետ Հանրային Ծառայությունների Մատուցում” ծրագրի համար, Թուլուզի Տնտեսագիտության Դպրոց, Arqade և IDEI:
2. Ուիթինգթոն, Դ. և Հանեն, Վ. Մայքլ, 2009թ. – Առավել թույլ զարգացած երկրներում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավման մարտահրավերը:
3. Դ. Ուիթինգթոն, Ջ. Բոլանդ, Վ. Ֆոսթեր - Ջրի սակագները և սուբսիդիաները Հարավային Ասիայում. Հիմունքների ընկալում:
4. Դ. Ուիթինգթոն, 2003թ. - Համայնքային ջրամատակարարման գնի սահմանում և սակագնի մշակում. Բարեփոխումների օրակարգ Հարավային Ասիայի համար:
5. Դ. Դ. Բաումանն, Ջ.Ջ Բոլարդ, Վ.Ս. Հանեմանն – Համայնքային ջրի պահանջարկի կառավարում և պլանավորում:
6. Ս. Նուժե, Դ. Ուիթինգթոն – “Ջարգացող երկրներում ջրի պահանջարկի գնահատում. Ընդհանուր պատկեր”, The World Bank Research Observer, Հատոր 25, no. 2, Օգոստոս 2010թ.
7. Ասիական Ջարգացման Բանկ – Նախագահի հաշվետվությունը և առաջարկությունները Տնօրենների Խորհրդին, Առաջարկված Վարկ. Հայաստանի Հանրապետություն. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ծրագիր: Հոկտեմբեր, 2007թ.
8. Համայնքային Ջարգացման Կենտրոն. Ազգային ֆինանսական ռազմավարության իրականացում Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի համար. աջակցություն Հայաստանի ջրի ոլորտի լիազոր մարմիններին՝ հասանելի ռեսուրսները լավագույնս օգտագործելու հարցում (Առաջադրանք 2): Մշակվել է EAP հանձնաժողովի համար: Հրատարակվել է ՏՀԶԿ կողմից, 2007a
9. Համայնքային Ջարգացման Կենտրոն. Ազգային ֆինանսական ռազմավարության իրականացում Հայաստանի ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի համար. խորհրդատվության տրամադրում Հայաստանի ջրի ոլորտի լիազոր մարմիններին՝ հիմնավոր սակագների քաղաքականություն մշակելու և մոնիթորինգի թեմայով (Առաջադրանք 3): Մշակվել է EAP հանձնաժողովի համար: Հրատարակվել է ՏՀԶԿ կողմից: 2007b.
10. Համաշխարհային Բանկ, Հայաստան. 2008-09թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամ, քաղաքականության արձագանքներ և տնային տնտեսությունների կողմից հաղթահարման ռազմավարություններ, 2010թ.:
11. Համաշխարհային Բանկ, Հայաստանի Հանրապետություն. Նոթեր Ջրամատակարարման Ոլորտի Մասին, Մայիս 2011թ., Հաշվետվություն No. 61317-AM:

12. Հայաստանի Հանրապետություն. Նոթեր Ջրամատակարարման Ոլորտի Մասին, Համաշխարհային Բանկ, Հաշվետվություն No. 61317-AM, Մայիս 2011թ.
13. ՀՀ Ջրային Օրենսգիրք, 2002թ.
14. Հայաստանի Հանրապետություն, Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր, (ԱՀՌԾ-II-ի վերանայված տարբերակ), սեպտեմբեր 2008թ.:
15. Հայաստանի Հանրապետություն, 2009-11թթ. Միջնաժամկետ ծախսային ծրագիր, հունիս 2008թ.:
16. Հայաստանի Հանրապետություն, Ջրային տնտեսության պետական կոմիտե, 2005-2009թթ. Տարեկան հաշվետվություններ, [www.scws.am](http://www.scws.am):
17. Հայաստանի Հանրապետություն, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, 2005-2009թթ. ջրամատակարար ընկերությունների կողմից ներկայացված հաշվետվություններ, [www.psrc.am](http://www.psrc.am)
18. Հայաստանի Հանրապետություն, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 2007-2009թթ. Տարեկան հաշվետվություններ, [www.mss.am](http://www.mss.am)
19. Օգուտների Բաշխման Վերլուծություն, Առաջադեմ Սոցիալական Տեխնոլոգիաներ, Հայաստան, 2010թ.